Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

P1885

6149
l-47 8

9 Кус-32р
297
4/К
3547

12002

2010

61գ.
Ջ-470.
Սա.

2239
3319
Ֆ-19

ԾԱՂԿԱՀԱՏՈՒԹԵԱՆ

ՀՆԱՐՈՂԸ

ԴՕՔՏՕՐ ԶԷՆՆԵՐ

№2749.

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՏԻԿ. ՄԱՐԳԱՐԻՏ.

Центральная Библиотека ... Ереван
ИНВЕНТАРИЗАЦИЯ 1936 г.
№

ՄՈՍԿՈՒԱ.
ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.
1890

Дозволено Цензурою. Эчміадзинъ, 6 Іюня 1890 г.

ՆՈՒԷՐ

ԴՈՔՏՈՐ ԱԼԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻՆ·

2

39666 ա/հ.



(390/40) 22784-ա

№2749.

ԾԱՂԿԱՀԱՏՈՒԹԵԱՆ ՀՆԱՐՈՂԸ

ԴՈՔՏՈՐ ՋԷՆՆԵՐ

Ա.

Մեծ անունների կարգում, որ յայտնի են համաշխարհային պատմութեան մէջ, դոքտոր Ջէնների անունը բռնում է ամենապատուաւոր տեղերից մէկը. բայց, ինչպէսով դորան, այդ անունը անմոռանալի կերպով մոռացուած է։ Մենք շատ բան գիտենք Գուտենբերգի, Ֆրանկլինի, Ստէֆենսօնի մասին. կարող ենք պատմել մի քանի բան Գալիլէոսի, Կոպէրնիկոսի, Նիւտօնի մասին. ծանօթ ենք Կոլումբոսի և Բարտոլդի Շվարցի գիւտերի հետ. մէկ խօսքով մեր յիշողութիւնը սուրբ կրպահէ նոցա անունները, որոնք այսպէս թէ այնպէս մարդկային ցեղը առաջ են մղել, ցոյց տալով նորան նոր ճանապարհներ խաւարից

դէպի լոյս։ Բայց Ջէնների մասին մենք երբէ՛ք չենք լսում և չենք կարդում. մենք ոչինչ չգիտենք նորա մասին, չնայելով, որ այդ անունը պէտք է յիշենք և արտասանենք ամենաջերմ շնորհակալութեամբ. այդ անունը կրողը մարդկութեան այն ամենամեծ բարերարներից մէկն է, որոնց ողորմած երկինքը ուղարկում է ժամանակ առ ժամանակ՝ երկրիս վերայ մարդկային թշուառութիւնները պակասացնելու համար։ Ամբողջ ցեղեր պարտական են Ջէններին իրենց կեանքը և առողջութիւնը. Ջէնների գիւտը այնքան բարերար է, որ նորա առաջ հանդչում են ուրիշ շատ գիւտեր, որոնք տուել են իրենց ստեղծողներին համաշխարհային և յաւիտենական փառք։

Դոքտոր Էդուարդ Ջէնները հնար դտաւ պաշտպանելու մարդիկներին մի սարսափելի վարակիչ հիւանդութիւնից, այն է ծաղկից։ Հիմայ օգտուելով այդ գիւտից, մենք երևակայել չենք կարող թէ առաջուան ժամանակները ծաղիկը որչափ վնասում էր մարդիկներին։ Ամբողջ բնակութիւններ ջնջվում էին երկրիս երեսից. ամբողջ գաւառներ, որտեղ այդ սարսափելի վարակումը տարածվում էր, համարեա թէ անմարդաբնակ էին դառնում։ Հիւանդութիւնը անսպասելի էր երևում. յանկարծ առանց պատճառի հիւանդանում էին մի քանի մարդիկ, և այդ բաւական էր, որ վարակումը հաստատուէր և արագ

սկսէր տարածուել։ Ծաղկի առաջին անգամ երևալիս, ժողովուրդը սարսափի մէջ ցրուեց և այդ հիւանդութիւնը տարածեց իրեն գիւղերի և քաղաքների սահմաններից շատ հեռու։ Ծաղիկը ոչ ոքի չէր խնայում, բայց առանձին ուժով վնասում էր երեխաներին։ Բաւական էր, որ մարդ մի անգամ միայն հիւանդին մօտենար և արդէն վարակվում էր. ասում են թէ վարակուողի զոլորշին և շնչառութիւնը նպաստում էին հիւանդութեան տարածուելուն. ծաղիկը դառնում էր էպիդեմիա (հանրախտ, համաճարակ ցաւ). զարմանալի արագութեամբ զօրանում էր և օրէ օր լայնացնում էր իւր իշխանութեան սահմանը։

Մտածելու հիմք կայ, որ մարդիկ ծաղկին ծանօթ էին դեռ ամենահին ժամանակները։ Մեր ձեռքն հասած հին հեղինակների գրուածքների մէջ շատ անգամ յիշվում է այդ սարսափելի վարակիչ հիւանդութեան մասին, որը շատ ժամանակ դատարկել է ամբողջ գաւառներ և, ինչպէս այդ նկարագրուած է, դատելով նշաններից, չպէտք է կասկածել, որ ծաղիկն է։ Այդպէս, Թուկիդիդէս յոյն պատմիչը իւր «Պելոպոնեսեան պատերազմի պատմութեան» մէջ նկարագրում է այն ախտը, որը այն ժամանակ ծովով Եթովպիայից բերուած էր և մի և նոյն ժամանակ ասում է. «մարդիկ հիւանդանում էին յանկարծ ա-

ռանց պատճառի. գլխի մէջ զգում էին տաքութիւն, աչքերը բորբոքվում ու կարմրում էին, լեզուի և քմքի վերայ արիւն էր երևում. բերանից վատ հոտ էր գալիս. յետոյ սկսվում էին գողը և երեսի դուրս տալը, կրծքում և ստամոքսում ցաւ, մաղձի թափուել և տաղտկութիւն. շատերը զկռտում էին, և ցաւ էին զգում աղեքների մէջ. բայց արտաքուստ մարմինը տաք, կամ դունատ չէր լինում. մի քանի հիւանդների մարմինը կարմրում էր, կապտում էր և ծաղկում էր մանր վէրքերով. վարակուողը թուլութիւն չէր զգում և պահպանելով բոլոր ուժերը, պատահում էր, որ մեռնում էր եօթերորդ կամ ինն երորդ օրը. ով որ այդ միջոցին հիւանդութեանը յաղթում էր, յետոյ ենթարկվում էր նորից դործարանների ամենատասակ բորբոքման, իսկ ով որ առողջանում էր, ամբողջ կեանքում անպատճառ պահպանում էր հիւանդութեան նշանները ձեռքերին, ոտքերին, իսկ երբեմն զրկվում էր տեսողութիւնից: Մէկ անգամ արդէն այդ հիւանդութիւնն ունեցողը էլ չէր վախենում նորա կրկնումից. այդպիսի մարդուն անուանում էին բաղդաւոր և յաջողակ»: Տիտոս Լիվիոս հռովմայեցի պատմիչը նոյնպէս յիշում է վարակման մասին, որը միակերպ հարուածում էր մարդիկներին և ընտանի կենդանիներին: Այդ նոյն հիւանդութեան մասին վկայութիւններ

կան մի քանի արարոցի հեղինակ բժիշկների մոտ, որոնք այդ հիւանդութեան դէմ ոչ մի հնար չմտնալով, գիտէին միայն, որ նա չէ կարող երկու անգամ կրկնուել մի և նոյն մարդու մէջ:

Ծաղիկը, ինչպէս հիւանդութիւն, վերջնականապէս որոշուեց մեզ աւելի մոտ ժամանակներում: Դարաբեցին շփոթել այդ ցաւը ուրիշ վարակիչ ախտերի հետ և սկսեցին միջոցներ գործ դնել նրա դէմ մրցելու համար. այդ միջոցների նպատակն էր խանգարել վարակման տարածուելուն. հիւանդներին բաժանում էին առողջներից. վարակուած կողմերը դնում էին առանձին հսկողութեան տակ և այլն. պատահում էր որ խե՜ղճ վարակուածներին տանում էին գիւղից կամ քաղաքից հեռու. տալիս էին նոցա քիչ ուտելիք և թողնում էին բաղդի բերմանը: Բայց այդ զգուշութիւնները մեծ մասով հետևանք չունեցան. վարակումը տարածվում էր իրան կարգով և տանում էր չափազանց զոհեր: Անցեալ և այս դարու սկզբի մի քանի տարիները նշանաւոր են ծաղկի հանրախտի առանձին հարուածներով: 1818 թուին չափազանց վնասուեց Անգղիան. ժողովուրդը հազարներով մեռնում էր. բոլոր հիւանդանոցները լեցն էին վարակուածներով. հիւանդութիւնը զօրանում և տարածվում էր զարմանալի արագութեամբ. ամենքի վրա սարսափ ընկաւ, կառավարութիւնը զը-

լուխը կորցրեց, տեսնելով այն միանգամայն անպէտք միջոցները, որ նա գործ էր դնում վարակման դէմ մրցելու համար։

Այդ սարսափելի ցաւը ոչ ոքի չէր խնայում. նա միակերպ մտնում էր և՛ հասարակ դասի խրճիթները և՛ իշխանների բնակարանները և՛ թագաւորի պալատը։ Յունուարի 18-ին, 1730 թուին ծաղկից մեռաւ Մոսկուայում ռուսաց նորահաս թագաւոր Պետրոս Բ. Աստուածայայտնութեան օրը, նա ծաղկով հիւանդացաւ. ասում են վարակուել էր իւր ընկեր իշխան Դոլգորուկիից և 12 օր տանջուելուց յետոյ պատանի թագաւորը 15 տարեկան հասակում դնաց յաւիտենականութիւն։ Նոյն վիճակն ունեցաւ և գաղեսացոց թագաւոր Լիւդովիկոս ԺԵ., որ վարակուել էր ծաղկով 64 տարեկան հասակում։ Այն ժամանակ համոզուած էին, որ ծաղիկը չէ կըրկնվում. կարծում էին, թէ մարդ զորանով մի անգամ հիւանդացած լինէր, կարող էր իրեն միանգամայն այդ ցաւից ամբողջ կեանքը ապահովուած համարել։ Մեծ մասով այդպէս էլ լինում էր, բայց դժբախտաբար բացառութիւններ էին պատահում, որոնցից մէկն էր և Լիւդովիկոսը. նա 14 տարեկան հասակում ծաղիկ հանել էր, այդ պատճառով, երբ 50 տարուց յետոյ նորից կրկնուեց, սկիզբը բժիշկներից ոչ մէկը չէր կարող կարծել, որ այդ հիւանդութիւնը ծաղիկ էր։ Բայց մի և նոյն ժամանակ թագաւորն անկասկած մեռել է ծաղկի վարակումից։

Ճշմարիտ է, որ ծաղկից ամենքը չեն մեռնում. շատերը յաղթում և կենդանի են մնում. բայց այդ բաղդաւորները մեծ մասով ամբողջ կեանքում ունենում են սարսափելի վարակումի նշանները. երեսը ծածկվում է կարմրութեամբ և չէջով, ծաղկի խոցերը շատ անգամ ապականում են ռունդները, թերթերունքները և այլն. այդ հիւանդութիւնը շատ անգամ ջնասում է թոքերին և թոքախտ է յառաջացնում. խլացնում է, տեսողութիւնից զրկում է։ Լօնդօնի կոյրերի խնամարկութեան տան հաշուետուութիւնից, որ տպուած էր այս դարու սկզբներին, երևում է, որ բոլոր կոյրերից, որոնք մնում են այն տան մէջ, երեք քառորդը զրկուած են տեսողութիւնից շնորհիւ ծաղիկ հիւանդութեան։ Դորանից կարելի է ենթադրել, թէ որչափ վիշտ, թշուառութիւն և տանջանք մտցնում էր այդ հիւանդութիւնը մարդկային կեանքի մէջ և որչափ անփոխարինելի ծախսեր ու զրկանք ունեցան տէրութիւնն ու ընտանիքը։

Բ.

Էդուարդ Ջէնները ծնաւ մայիսի 17-ին 1749 թուին Անգղիայում, Գլօչեստերի կոմսութեան մէջ, Բերկլէյ գիւղում. Նորա հայրը մի հին ցեղից էր հոգևոր կոչումով. և այն ժամանակուայ համար բաւական կրթուած մարդ էր: Դժբախտաբար նա մեռաւ, երբ Էդուարդը հազիւ թէ հինգ տարեկան էր. նա մնաց միանգամայն որբ, որովհետև մօրից զեռ յառաջ էր զրկուել. հօր տեղը բռնեց մեծ եղբայրը, որի հսկողութեան տակ անցաւ Ջէնների երեխայութիւնը: Ութ տարեկան հասակում նորան տուին մօտակայ ծխական դպրոցը, որտեղ և առաւ իւր առաջին կրթութիւնը. այդտեղ աւարտելուց յետոյ նա գնաց Զողբիւրի կոչուած գիւղը Բրիստոլիայի շրջակայքում մէկ հմուտ բժշկի մօտ և սկսեց նորա առաջնորդութեամբ ուսումնասիրել բժշկութիւնը: Բնական գիտութիւնը և բժշկութիւնը կարծես զեռ կանուխ հասակից Ջէնների պարապմունքի սիրելի առարկաներն էին: Ջէնների Զողբիւրիում մնալու մանրամասնութիւնները ափսոս որ մենք չունենք: Այդ երևելի մարդու կեանքը մեզ յայտնի եղաւ շնորհիւ նորա ընկեր Ջոն Բարօնի, որ ունէր Ջէնների նամակները և նորա թողած յիշատակարանները, և

որը անձամբ մօտիկ ծանօթ էր նորան, կազմել էր բաւական մանրամասն նկարագիր իւր երևելի ընկերոջ կեանքի մասին. բայց այդ գրքի մէջ հմտարեա՛ ոչ մի տեղեկութիւն չկայ Ջէնների երեխայութեան մասին. այդ կարելի է բացատրել նորանով, որ Բարօնը իւր ծանօթութիւնը և ընկերութիւն Ջէնների հետ սկսել է այն ժամանակ, երբ նա արդէն հասակն առած էր, և որ Էդուարդի երեխայութիւնը չէր ներկայացնում ոչ մի երևելի, աչքի ընկնող բան, որ այսպէս թէ այնպէս կարողանար ազդել նորա ապագայ բաղդի վերայ, և կարողանար ունենալ մի որ և է յարաբերութիւն նորա կեանքի գլխաւոր խնդրի հետ. հակառակ դէպքում Բարօնը կը յիշէր այդ հանգամանքների մասին. նա պէտք է այդ գիտենար, ունենալով սերտ յարաբերութիւն ինչպէս Ջէնների, այնպէս էլ նորա մօտիկ ազգականների հետ:

Ուսումնասիրելով բոլորը, ինչ որ կարող էր գիտենալ մի զաւառացի բժիշկը, քսանևհինգ տարեկան Ջէնները, փափագելով գիտութեան, գնաց Լօնդօն, այնտեղ նորան յաջողուեց սեղմաւորուել յայտնի բնագէտ Գէնտերի մօտ, որը այն ժամանակ Ս. Գէորգեան հիւանդանոցի բժիշկն էր: Գէնտերը իւր ճոխ գիտութիւնները, մանաւանդ համեմատական անատոմիան, ուսել էր ինքն իրեն միմիայն իւր անխոնջ աշխատանքով: Հիւանդանոցում կատարելով

բժշկի պաշտօն, նա մի և նոյն ժամանակ և գլխաւոր զինուորական բժիշկ էր. նա ուսանողների համար կարդում էր դասախօսութիւններ, հսկում էր իւր տան մէջ հիմնած գործնական անատոմիայի վարժարանին և մի և նոյն ժամանակ միջոց էր գտնում կենդանիների վերայ փորձեր անելու և շատ կարևոր ու գիտնական յօդուածներ հեղինակելու. նա օրական միայն հինգ ժամ էր քնում. հասկանալի է, որ երիտասարդ Ջէնները շուտով հպատակուեց իւր երևելի ուսուցչի ազդեցութեանը, որի ձեռքի տակ նա եռանդով պարապում էր բնական գիտութիւնների մասով և երկու տարուայ ընթացքում, որ անցուցել էր Գէնտերի մօտ, ահագին յառաջադիմութիւն արեց գիտութեան այդ ճիւղում:

Շուտով Ջէնների անունը ինչպէս բնագէտ յայտնի եղաւ անգլիական գիտնականների շրջանում. այնպէս որ, երբ 1772 թուին յայտնի Ծովագնաց Կուկը պատրաստվում էր իւր երկրորդ պտոյտն անելու աշխարհի շուրջը, Գէնտերը խորհուրդ տուեց Ջէններին իրեն հետ տանելու իբրև գիտնականի: Կուկը ուրախութեամբ համաձայնեց, բայց Ջէնները վճռողաբար մերժեց այդ պատուաւոր առաջարկութիւնը, աւելի լաւ համարելով խաղաղ պարապել գիտութեամբ իւր հայրենիքում. բայց դորանից հիմայ նորա մէջ հասունանում էր մի մեծ միտք, որի կա-

տարման համար նա յետոյ փչացրեց իւր բոլոր ամենալաւ ուժերը և շատ տարիների աշխատանքը լի ծանր մրցումներով և տանջանքներով:

Լօնդօնում վերջացնելով իւր կրթութիւնը, Ջէններ վերադարձաւ հայրենիք, սկսեց պարապել բժշկութեամբ, որը շատ արագ յառաջ գնաց: Ջէնների կեանքի այդ շրջանը ամենաբաղդաւորն էր. նա շատ ընկերներ ունէր. բոլորը սիրում էին նորան իւր ուրախ, բարեսիրտ ու պարզ բնաւորութեան համար. Ջէնների խօսակցութիւնը վերին աստիճանի կենդանի և խրատական էր, մանաւանդ երբ խօսք էր լինում բնութեան երևոյթների մասին, որը նա չափազանց սիրում էր և գիտէր լիակատար: Այստեղ Ջէնների կեանքը անցնում էր հանդարտ ու խաղաղ, չգիտենալով դեռ այն յուզմունքները, որ ապագայում վիճակուած էր նորան կրելու: Այն ժամերին, երբ ազատ էր լինում բժշկի պարտականութիւնից, նա շարունակում էր եռանդով պարապել բնական գիտութեամբ: Թափառում էր շրջակայ այլ տեղերում, ուսումնասիրելով նոցա կենսական կազմակերպութիւնը. կենդանիների վերայ դիտողութիւններ էր անում, մանաւանդ նոցա ձմեռուան քնի վերայ. ուսումնասիրում էր թռչունների բարքը. այդ բանի մէջ շատ էր օգնում նորան իրեն եղբօր որդին՝ Հենրիկոսը. ֆիզիքական փորձեր էր անում: Մէկ անգամ

հատարակութեանը զուարճացնելու համար շինեց մինչև անգամ օդապարիկ, լցնելով նորան տաք օդով, (մենգոլֆեր)։ Առհասարակ, ենթարկելով դաւառական կեանքի շատ անյարմարութիւններին, մենութեանը, շրջապատող ագիտութեանը և դատարկութեանը, Ջէնները կարողացաւ լաւ տեղաւորուել մի մռայլուած անկիւնում և խելացի կերպով անցնել իւր ժամանակը։ Անդադար աշխատելով գիտութեան և բժշկութեան վերայ, նա գտնում էր ժամանակ յարգելու և արուեստը. այդ միջոցին են գրուած նորա մի քանի ոտանաւորները, որոնց բովանդակութիւնները համարեա միշտ առնուած են բնութիւնից։ Ջէնները շատ էր սիրում երաժշտութիւն և նուագում էր մի քանի երաժշտական գործիքների վերայ. նորա հակողութեան տակ կազմվում էին երգեցիկ և նուագածու խմբեր, որոնցով հիանում ու յափշտակվում էր սակաւապահանջ տեղացի հասարակութիւնը։

Մարտի 6-ին 1788 թուին 39 տարեկան հասակում Ջէնները ամուսնացաւ և շատ բաղդաւոր էր իւր ամուսնական կեանքում. յաջորդ տարուայ յունուարին նա ունեցաւ մի տղայ, որի անունը դրին Էդուարդ։

Գ.

Դեռ այն ժամանակ, երբ Ջէնները բժշկութիւն էր սովորում Զոդբիւրիում, մէկ անգամ նա շատ զարմացաւ մի գիւղացու կնոջ խօսքերից, որ եկել էր Գէնտերի մօտ խորհուրդ հարցնելու իւր հիւանդութեան համար. բժիշկն ասաց, որ նորա հիւանդութիւնը ծաղիկ է, բայց կինը բոլորովին չէր համաձայնում այդ կարծիքին, ասելով, որ նա առաջ ունեցել է կովի ծաղիկ և այդ պատճառով միանգամայն ապահովուած է բնական ծաղկից։ Հիւանդը այդ ասում էր այնպէս համոզուած, կարծես թէ բացատրում էր ամենքին արդէն վաղուց յայտնի մի անվիճելի ճշմարտութիւն։ Այդ կնոջ խօսքերը խորը թափանցեցին Ջէնների յափշտակուող գլուխը։ «Կովի ծաղիկը, մտածում էր նա, անհամեմատ թեթև է բնականից, մարդկայինից և տանելի է առանց դժուարութեան ու հետևանքների. համարեա՛ օրինակներ չկան, որ մարդ նրանից մեռած լինի. և եթէ այդ, ինչպէս հաստատում է կինը, պահպանում է իսկական կործանիչ ծաղկից, արդեօք կարելի չէ՞ նորան արուեստական կերպով արծարծել մարդկային կազմուածքի մէջ, որպէս զի նա ամբողջ կեանքում անվտանգ մնայ ծաղկի վարակումից»։ Այսպէս,

22784-00
(3210 40)
ՀՍՍՀ-ՍՍՌ Ա.

առաջին անգամ հանդէս եկաւ այդ մեծ հարցը, որի լուծումը յետոյ անմահացուց Բօրկլէացի համեստ դիտնականին։

Գնալով Լօնդօն, Ջէնները իւր կասկածները կովի ծաղկի մասին յայտնեց Գէնտերին, որը շատ ուշադիր եղաւ իւր աշակերտի մտքերին և խրախուսեց նորան այդ հարցի լուրջ հետազօտութիւններն անելու։ Ջէնները այդ առարկայի մասին խօսեց Լօնդօնի և միւս բժիշկների հետ, բայց նոքա նայում էին այդ հարցի վերայ շատ անտարբեր. ուղեղ է, նոքա լսել էին, որ ծաղկի թոյնը չի կպչի նորան, ով որ կով է կթում։ Նոքա մինչև անգամ տեսել էին այդպիսի օրինակներ, բայց մի և նոյն ժամանակ եղել են և դէպքեր, երբ բնական ծաղիկը երևացել է և կովի ծաղկից յետոյ. ուրեմն, բժշկները վճռեցին, չարժէ շատ մտածել այդպիսի դատարկ բաների վերայ։

Բայց չնայելով այդ կարծիքներին, Ջէնները չէր թողնում իւր նուիրական միտքը. վերադառնալով հայրենիք, նա սկսեց ուշադրութեամբ հետևել և հարց ու փորձ անել ագարակներում և դոմանոցներում, որտեղ պահվում էին շատ եղջիւրաւոր անասուններ, կովի ծաղկի մասին։ Այստեղ երկար ժամանակուայ ընթացքում հաւաքուել էին շատ զանազան աւանդութիւններ և պատմութիւններ այդ ցաւի ազդեցութեան մասին, բայց մի և նոյն ժամանակ այստեղ ամեն մի վեր տուած վէրք, որ երբեմն անցնում էր անասունից կթողներին, ընդունվում էր կովի ծաղկի տեղ, թէև ոչ ամեն վեր տուած ապաքինվում էր բնական ծաղկի վարակումից։ Այդ պատճառով, Ջէնները ամենից առաջ պէտք է պարապէր անասունների մէջ եղած թունաւոր հիւանդութիւնների հետազօտութեամբ և սովորէր զանազանել իսկական կովի ծաղիկը կեղծից։ Նա շատ աշխատեց այդ առարկայի վերայ. նայում էր, ուսումնասիրում էր, ծաղկի վէրքերի պատկերները նկարում էր և վերջապէս հասաւ իւր նպատակին. միայն վէրքին նայելուց, նա կարող էր որոշել, թէ այդ կովի ծաղիկ է, թէ՞ որ և է ուրիշ բան։ Բայց այդ ժամանակ ծագեց նոր դժուարութիւն. դուրս եկաւ, որ և իսկական կովի ծաղիկը ոչ միշտ պահպանում է բնականից. եղել են դէպքեր, որ կով կթող կանայք, թէև հանել են կովի ծաղիկ, բայց յետոյ վարակուել են և բնականով։ Կրկին պէտք եղաւ մտածել, նայել և հետազօտել։

Երկար խուզարկութիւններից յետոյ Ջէնները եկաւ այսպիսի եզրակացութեան, որ ծաղիկը կովի պտուկի վերայ անպատճառ պէտք է ունենայ մի յայտնի հատուկութիւն, որպէս զի նորա միջի թարախը, վարակելով մարդկային կաղմուածքը, կարողանայ նորա մէջ երևցնել պահպանողական ոյժ.

հակառակ դէպքում նա միայն տեղական դրդումունք է յառաջացնում:

Այդ բոլոր հետաղօտութիւններն անելով, Ջէնները շատ անգամ խօսում էր իւր դաւառացի ընկերների հետ իրեն զբաղեցնող առարկայի մասին, աշխատելով նոցանից որ և է տեղեկութիւն հաւաքել: Բայց նոքա կովի ծաղկի մասին դիտէին միայն, ինչ որ լսել էին, այնպէս որ ոչ մի նորութիւն չէին կարող հաղորդել Ջէններին. նոքա մինչև անգամ խոյս էին տալիս այդ տեսակ խօսակցութիւնից. նոցա զրդռում էր Ջէնների հետաղօտութիւնը ծաղկի վերաբերութեամբ. իրենց ազիտութեամբ և ձեւականութեամբ նոքա այդ համարում էին յանդուգն մարդու անպէտք գործ: Առհասարակ այդ յետ ընկած էկուլսները չէին սիրում Ջէններին թէ նորա համեստ կեանք վարելու և թէ մշտական զիտութեամբ պարապելու համար: Պատահում էին բաւական անհաճոյ ընդհարումներ. մէկ անգամ թշնամութիւնը հասաւ այն տեղ, որ նոքա առանց հանդիպի սպառնային աքսորել Ջէններին իրենց շրջանից:

Առանց վերաւորուելու այդ բանից Ջէնները շարունակեց պարապել իւր գործով. նա դեռ չէր տարտաձայնում իւր հետաղօտութիւնների նպատակը. նա կամենում էր առաջ բազմակողմանի ուսումնասիրել առարկան, որպէս զի յետոյ ներկայացնէր նորան ընկերութեանը բոլորովին մշակած, անվիճելի և անկասկածելի կերպով: Մեծ դիւաը հասունանում էր և լցնում էր Ջէնների սիրտը սրտիումով և ուրախութեամբ:

Մէկ անգամ մի մայիսուան օր, 1790 թուին, Ջէնները իւր ընկեր Գարդների հետ ձիով գնում էր Բրիստոլիայի ճանապարհի վերայով: Եղանակը հիանալի էր. տեսարանները մէկը միւսից զմայլեցուցիչ էին, քանի նոքա առաջ էին գնում. ճանապարհը երբեմն սառերաւոր անտառի միջից էր անցնում, որտեղից բուրում էր դարնանային ծաղիկների անուշահոտութիւնը և թռչունների ուրախ դայլայլիկը: Բնութեան զեղեցկութիւնը, մայիս օրուան դուրեկանութիւնը, զուարճալի զբօսանքը, բարեկամի ընկերութիւնը և միայնակութիւնը. այդ ամենը այնպէս լարեցին Ջէններին պարզասիրտ լինելու, որ այդտեղ առաջին անգամ նա վճռեց բանալ իւր գաղտնիքը: Նա սկսեց խօսել կովի ծաղկի մասին, նորա պահպանողական ուժի և նորան տարածելու կարելիութեան մարդիկների մէջ, որպէս զի նոքա ապահով մնան ծաղկի վարակումից, խօսեց իւր երկար տարիների այդ հարցին վերաբերեալ հետաղօտութիւնների ու աշխատանքների մասին, այն մասին, թէ հիմայ շուտով այդ գործը վերջանալու վերայ է, և թէ կասկած չի մնալ որ կարելի է փրկել մարդկու-

թիւնը այդ ամենամեծ չարիքից. յետոյ նա խնդրեց Գարդներին առ այժմ չտարաձայնել այդ մասին, տեղիք չտալու համար ծաղրերի և անտեղի բամբասանքի, որոնք կարող են հասարակութեան մէջ յարուցանել նախապաշարմունք։

Անցաւ էլի մի քանի տարի, որոնց ընթացքում Ջէնները չէր դադարում աշխատել անխոնջ իւր գիտի վերայ։ Վերջապէս միանգամայն համոզուելով, որ իւր եզրակացութիւնները ճշմարիտ են, նա վճռեց գործով այդ փորձել։ Մայիսի 14-ին 1796 թուին ծաղկահատութեան առաջին փորձն եղաւ, այսինքն մարդու ծաղիկը պատուաստելու կովի ծաղկով։ Ջօն Ֆիպս ութ տարեկան տղայի թևերին Ջէնները երկու երկու փոքրիկ ճեղք արեց և նոցա մէջ ածեց մի-մի կաթիլ թարախ առած Սարա Նելմս անունով մի կնոջ թևի ծաղկի վէրքերից, որը պահում էր կովեր և վարակուել էր կովի ծաղկով։ Այդ կերպով կովի ծաղկի թոյնը լցուեց մարդկային կազմուածքի մէջ, որպէսզի արուեստական կերպով նորա մէջ գոյանայ կովի ծաղիկը։ Ամեն բան այնպէս եղաւ, ինչպէս որ սպասում էր Ջէնները. տղան հիւանդացաւ այն սովորական ցաւերով, որ կովի ծաղկից են առաջ գալիս. այսինքն թեթև տաքութիւն, տենդային դրութիւն, վէրքերի դուրս տալ, տաղտկութիւն և այլն. և ցաւերը անվնաս անցնում էին մի

քանի օրից յետոյ։ Ֆիպսը բոլորովին առողջացաւ։ Բայց հիմայ հնայ իմանալու ամենագլխաւորը, թէ արդեօք նա ապահովուած է՞ր իսկական վարակումից։ Այդ հարցը վճռելու և միանգամայն համոզուելու համար իւր տեսական եզրակացութիւնների մէջ, Ջէնները գործ դրեց մի սարսափելի միջոց, այն է՝ յունիս ամսին նա առաւ արդէն իսկական ծաղկով հիւանդի թոյնի թարախը և լցրեց այդ նոյն տղայի թևի մի քանի ճեղքերի մէջ, այսինքն դիտմամբ վարակեց նորան այդ սարսափելի հիւանդութեամբ։ Դորանից յետոյ Ջէնները երեք՝ տանջանքով լի՝ օրեր անցուց. նա իւր վստահ փորձի հետևանքներին էր սպասում։ Եթէ իսկական ծաղկի թոյնը չներգործէ այն կազմուածքի վերայ, որը արդէն կովի ծաղկով հիւանդ է եղել, այն ժամանակ նորա խընդիրը վճռուած է. դիւրը կրհաստատուի արդէն ամուր հիմքի վերայ, բայց եթէ՞... Ջէնները սպասում էր տենդային անհամբերութեամբ։

Անցաւ մէկ օր. վարակումը չերևնուեց, անցաւ էլի մէկ՝ տանջանքով լի՝ երկար օր, որի ընթացքում Ջէնները իւր հոգեկան բոլոր ոյժերով հետևում էր տղայի առողջութեանը և դարձեալ Ֆիպսը անվնաս մնաց։ Եթէ այդ ժամանակ տղան պատահմամբ մրսէր և դդար տաքութիւն, կամ ծանրութիւն զբաղմունքի, Ջէնները անշուշտ կրխելադարձուէր. նորա

բոլորքուած, յուզուած ուշադրութեանը այդ տա-
քութիւնը անպատճառ վարակման ներգործութիւն
կերևէր։ Բայց բարեբաղդաբար այդ չպատահեց. նոյն-
պէս անվնաս սկսուեց և վերջացաւ երրորդ օրը,
հիւանդութիւնը չերևաց։ Կարելի է երևակայել Ջէն-
ների ուրախութիւնը։ Հիմայ ապացուցեց գործով,
որ նա չէ սխալուել և որ նորա աշխատանքները
զուր չանցան։ Մի քանի օր Ջէնները անցկացրեց մի
առանձին տեսակ հրճուանքի մէջ, լցուած ու ճրն-
շուած բաղդաւորութեամբ։

Այդպէս կատարուեց մարդկային դիտութեան ա-
մենաբարերար դիւտերից մէկը։ Կատարուեց նա, ինչ-
պէս մենք տեսանք, ոչ յանկարծ, այլ երկար հետա-
զօտութիւնների, խուզարկութիւնների ու փորձերի
ճանապարհով։ Շատ եռանդ և անասելի աշխատանք
գործ դրուեց այդ գործի վերայ և այդ պատճառով
հեղինակը աւելի արժանի է մեր զարմանքին ու
յարգանքին։

Դ.

Զպէտք է կարծել, որ Ջէններից առաջ յայտնի
չէր այդ արուեստական վարակումը. ընդհակառակն
իսկական ծաղիկը մէկ մարդուց միւսին տալը՝ պա-
տուաստաման միջոցով, արդէն վաղուց գործ էր

դրվում Եւրոպայում։ Այդ միջոցը Կ. Պոլսից բերել
էր բժիշկ Տիմոնին, որը և հրատարակեց Անգղիա-
յում 1714 թուին։ Անգղիական դեսպանի կինը
տիկին Մօնտեգիւ առաջինն եղաւ, որ փորձեց այդ՝
իւր որդու վերայ 1717 թուին, իսկ յետոյ աղջկայ
վերայ 1722 թուին։ Այդ գործողութիւնը, որ ա-
նուանվում էր ինոկուլեացիա, այն էր, որ առողջ
երեխայի և հասակն առած մարդու թևի ձեղքերի
մէջ լցնում էին թարախի կաթիլներ, որ առնում
էին իսկական ծաղկով հիւանդից. երևում էին վա-
րակումի նշանները, բայց անհամեմատ քիչ, քան թէ
այն դէպքերում, երբ հիւանդութիւնը ինքն իրեն էր
յառաջ գալիս։ Հիւանդը մեծ մասով լաւանում էր
և այդ ժամանակուանից կարող էր չվախենալ վա-
րակումից։ Առաջին ութ տարուայ ընթացքում այդ
միջոցով պատուաստեցին 845 մարդ, որոնցից միայն
17 (այսինքն $^{1}/_{50}$ ամբողջ թուի) չդիմացան ինոկու-
լեացիայի հետևանքներին և մեռան, այն ինչ ծաղ-
կից սովորաբար մեռնում էր հիւանդների ութերորդ
մասը։ Ըստ երևոյթին այդ արդէն բաւական թե-
թևութիւն էր։ Բայց իսկապէս այդպէս չէր դուրս
գալիս։ Բանն այն է, որ մարդուն ինոկուլեացիա անե-
լիս, պատուաստվում է ծաղկի վատ տեսակը, որից
պէտք է բժշկուել, որովհետև նորա նշանները վը-
տանգաւոր են և կարող են շատ տխուր հետևանքներ

ունենալ. այդ գործողութեանը պէտք է առաջնորդէ ոյժից ձգող պահեցողութիւնը, որպէս զի նախապատրաստէ կազմուածքն և նորան աւելի ընդունակ անէ վարակման: Բացի այդ՝ հիւանդը պատուաստուած ծաղկից հեշտութեամբ կարող էր վարակել իւր շրջապատողներին և տարածել այդ հիւանդութիւնը այն տեղերում, որտեղ առաջ նորա մասին լսած անգամ չէին: Այդպէս էլ եղաւ: Բժիշկ Գէբերդնեռի հաշուով անցեալ դարու վերջին 30 տարին, այսինքն այն ժամանակ, երբ ինոկուլեացիան յաճախ լինում էր Լօնդօնում, տարեկան հազար բնակչից 95 մարդ մեռնում էր ծաղկից. այն ինչ մինչև այդ պատուաստման միջոցը մացնելը նոյն թուից մեռնում էր միայն 70 մարդ: Դորանից պարզ երևում էր, որ ինոկուլեացիան, օգնելով մինչև մի որոշ աստիճան առանձին ամեն մի մարդու՝ ազատուելու ծաղկի վարակումից, մի և նոյն ժամանակ նպաստում էր և տարածուելուն:

Ներկայումս ծաղկի այսպէս պատուաստուելու միջոցը բոլորովին թողնուած է. բայց Ջէնների դիւտից առաջ աւելի լաւ միջոց չկար պաշտպանուելու ծաղկի թոյնից. նորանով օգտվում էին շատ յայտնի մարդիկ և թագակիր անձինք: Այդպէս՝ ռուսաց թագուհի Եկատերինա Բ. հոկտեմբերի 12-ին 1768 թուին պատուաստեց իրեն ծաղիկը ինոկուլեացիայի միջոցով:

Այդ արեց բժիշկ Դիմդալը. որպէս զի պատուաստումը և հիւանդութիւնը դաղտնիք մնայ և չվարակէ շրջապատողներին, թագուհին հէ՛նց միւս առաւօտ գնայ Ցարսկօէ Սելօ, որտեղ և մնայ մինչև նոյեմբերի 1, այսինքն մինչև բոլորովին առողջանալը: Մեզ հասաւ մանրամասն նկարագրութիւնը հիւանդութեան բոլոր այն նշանների մասին, որ թագուհին կրել էր արուեստական ծաղկով վարակումից, թէև անվնաս անցաւ ամեն բան և թագուհին փորձելով իրեն վերայ ինոկուլեացիայի ազդեցութիւնը և նորան վտանգաւոր չհամարելով, հէ՛նց Պետերբուրգ վերադառնալու օրը հրամայեց ինոկուլեացիա անել թագաժառանգ Պաւել Պետրովչին:

Ե.

Հիմայ մնում է Ջէններին տարածել իւր բարերար դիւտը և այդ անել բոլոր մարդկութեան սեփականութիւն: Հաստատ հաւատացած լինելով, որ իւր դիւտը կ'ազատէ աշխարհիս մէկ ամենամեծ թշուառութիւնից, նա եռանդով ձեռք զարկեց իւր այդ երկրորդ, համարեա թէ ամենագժուար գործի վերջանալուն:

Յունիսի 21-ին 1798 թուին Ջէնները հրատարա-

կեց մի փոքրիկ բրոշիւր «Կովի ծաղկի ազդեցութիւնը և պատճառների հետազօտութիւնը», որի մէջ և պատմել էր իւր գիւտի մասին. նա սկիզբը կամենում էր այդ հեղինակութիւնը տալ «Գիտութիւնների արքայական ընկերութեան երկասիրութիւնների մէջ». բայց այդ չընդունուեց նորա համար, որ նա իբր թէ բովանդակում էր իրեն մէջ յանդուգն և անհաւատալի մտքեր։

Իւր «հետազօտութիւնների» մէջ Ջէնները այսպիսի միտք է առաջ բերում. մարդու հեռանալը բնութիւնից ստեղծել է նորա մէջ շատ հիւանդութիւններ, որոնց նա բոլորովին ծանօթ չէր իւր բնական վիճակի մէջ. նոյն վիճակն ունեցել են և մի քանի կենդանիներ, որոնք շատ հին ժամանակուանից եղել են մարդիկների կենակիցներն և վայրենութիւնից անցնելով դէպի ընտանի վիճակը, նոքա ենթարկուել են նոր հիւանդութիւնների և մի և նոյն ժամանակ ծաղկի. յետոյ այդ հիւանդութիւնը անցել է մարդուն, բայց ամենավտանգաւոր կերպով։ Պատուաստելով թարախը, որ առնվում է կենդանիներից, մենք զարթեցնում ենք մարդու մարմնի մէջ ամենաթեթև հիւանդութեան սկզբի տեսակը, բայց մի և նոյն ժամանակ ոչնչացնում ենք հակումը դէպի ծաղկի ամենավտանգաւոր տեսակը։

Այդ բրոշիւրը շատ մեծ տպաւորութիւն գործեց

անգղիական հասարակութեան վերայ և այդ հասկանալի է. մինչև հիմայ ոչ ոքի մտքից չէր անցել կենդանուց առնել ծաղիկը և նորանով պատուաստել մարդու, որպէս զի նա պաշտպանուած լինի վարակումից և յանկարծ մի որ և է դաւառական բժիշկ սկսում է համոզել հասարակութեանը ընդունելու նորա գիւտը և անյապաղ օգտուելու նորանից։ Սմենուրեք գործադրուելու իրաւունք ստանալուց առաջ, Ջէնների նոր առաջարկութիւնը պէտք է մրցէր այն ժամանակուայ հասարակական տգիտութեան և նախապաշարմունքի հետ։ Ծաղրածութիւններ էին թափվում, հանդէս էին գալիս զաւեշտական պատկերներ. մինչև անգամ այն ժամանակ յայտնի բժիշկ Մօզելէյը հակառակեց Ջէնների գիւտին. «ի՞նչ դուրս կըգան այդ նորելուկ բաներից, գրել էր նա. ինչո՞ւ համար այդ անասնական ախտերը շփոթում են մարդկայինի հետ. մի՞թէ ուզում են մեզանում ստեղծել ճիւաղներ, ինչպէս են յուշկապարիկները կամ այլ հրէշները և այլն»։

Մի և նոյն ժամանակ հասարակական ուշադրութիւնը սաստիկ լարուած էր։ Սմեն տեղից լսվում էին աս ու լիներ, խօսակցութիւններ և վէճեր նոր գիւտի մասին։ Իսկ Ջէններն այդ ժամանակ քնած չէր. ուրիշ եռանդով քան առաջ նա պարապում էր իւր նուիրական գործով. նա հասկանում էր, որ իւր

գիւտի բաղդը վճռուելու բոպէն հասել է. պէտք էր գործ դնել բոլոր հնարքները, որպէս զի հէնց հիմայ ապացուցանէ մարդիկներին ծաղկահատութեան նոր միջոցի ազատարար ոյժը:

Բարեբաղդաբար բժշկների միջից շուտով երևեցան Ջէններին համակրողներ: Ամենից առաջ համոզուեց գիւտի օգտակարութեանը Լօնդօնի բժիշկ Կլայնը, որը խորհուրդ տուեց Ջէններին գնալ Լօնդօն, խոստանալով նորան ոսկի լեռներ այդ նոր արհեստի շնորհիւ: Բայց Ջէնները պատասխանեց. «Մինչև հիմայ իմ կեանքիս ճանապարհի վերայ ես չեմ որոնել բարձր տեղեր. սիրել եմ միշտ դաշտավայր, քան թէ լեռ. մի՞թէ հիմայ, երբ մօտենում է իմ կեանքիս երեկոն, ես կ՝երթամ որոնելու հարստութիւն և փառք»: Եւ նա մնաց գիւղում:

Բժիշկները սկսեցին խուզարկութիւններ և հետազօտութիւններ անել. նոցանից մէկը, Պիրսօն անունով, նամակագրութիւն սկսեց համարեա թէ ամբողջ Անգղլիայի հետ կովի ծաղկի ազդեցութեան մասին մարդու վերայ, և ամեն տեղից ստանում էր տեղեկութիւններ, որոնք հաստատում էին Ջէնների գիւտը. այսինքն այն մարդիկը, որոնք վարակուած են եղել կովի ծաղկով, իրենց ապահովուած են համարում իսկական ծաղկի վարակումից: Մէկ ուրիշ բժիշկ, Վուդվիլ անունով, գտաւ կովի ծաղիկ Լօնդօնին

մօտ մի ագարակում և շտապեց այդ մասին հաղորդել Ջէններին՝ «Ես մէկ հիւանդ կովից առայ թարախ և հէնց նոյն օրը նորանով պատուաստեցի 6 մարդ. միւս օրը ես նկատեցի նոցանից մէկի վերայ գեղեցիկ ծաղկի վէրքեր, որոնցից առայ թարախ փոքրիկ ունելով և պատուաստեցի էլի մի քանիսին հիւանդանոցում»:

Ջէնների նկարած ծաղկի վէրքերի պատկերները շատ ուղիղ էին:

Փիչ-փիչ ամենքը սկսեցին մասնակցել Ջէնների գիւտին: Մէկ անգամ բժիշկ Պիրսօնը նորան գրեց. «Ձեր անունը մարդիկների յիշողութեան մէջ կ՝ապրի այնքան, մինչև որ շնորհակալութեան և յարգանքի զգացմունքը դէպի իրենց բարերարները չմեռնի նոցա սրտում»:

Եւ այդպէս ամեն բան ըստ երևոյթին խոստանում էր արագ յաջողութիւն Ջէնների գիւտին. բայց ճակատագիրը կամեցաւ կարգադրել ուրիշ կերպ. սարսափելի դժբախտութիւններ հասան այդ գիւտին և արգելք եղան մի քանի ժամանակ ծաղկահատութեան տարածուելուն:

Զ.

Յանկարծ Ջէններին լուր հասաւ, որ Լոնդոնում բժիշկ Վուդվիլի փորձերը չեն յաջողուել. նա այդ փորձերն արել էր հիւանդանոցում, (որը հաստատուած է մանաւորապէս մարդիկների ծաղիկը կրելու համար) այն մարդիկներին, որոնք միշտ բնական ծաղկով վարակուած օդի ազդեցութեան տակ էին։ Այդ հանգամանքը բնական է, որ առաջ բերեց շատ ամենասխուր հետևանքներ. կովի ծաղկի յատկութիւնը փոխվում էր իսկականի ազդեցութեան տակ. այդ պատճառով Վուդվիլի պատուաստած անձինքն ունեցան բոլոր այն տանջանքների նշանները, որ ունենում են իսկական ծաղկով վարակուածները. նոցա վերայ դուրս տուեց շատ ծաղկի վէրքեր (200-ից մինչև 300), ցնցումներ էին առաջ գալիս, փսխում էին և այլն։

Այդ քիչ էր. Ջէնները ստացաւ Լոնդոնից իւր եղբօր որդուց մի նամակ այս բովանդակութեամբ. «Շտապեցէք գալ այստեղ. ձեր ներկայութիւնը անհրաժեշտ է. ձեր դափնիները կամենում են ուրիշները իրենց սեփականել. — բժիշկ Պիրսօնը զբաւոր դիմել է բոլոր բժիշկներին, առաջարկելով նոցա կովի ծաղկի թարախը և համոզելով վերցնել այդ միայն

իրենից, որովհետև միայն ինքը ունի թարմ և հաստատուած թարախ. բացի այդ՝ նա կարդացել է և հասարակական դասախօսութիւններ կովի ծաղկի մասին և այդպէս հասարակութեան աչքին յայտնել է իրեն իբրև հեղինակ այդ գիւտի։ Տպաւորութիւնը մեծ է։ Ձեր ընկերները խորհուրդ են տալիս շուտով պաշտպանուել»։

Ջէնները անյապաղ գնաց Լոնդոն։ Ամենից առաջ նա դիմեց Վուդվիլին, որը և պատմեց իւր փորձերի մասին. դուրս եկաւ, որ այդ բժիշկը պատուաստել է 200 մարդու և որ ծաղիկը վարակիչ է եղել. նա առած է եղել թարախը այն հիւանդների ծաղկի վէրքերից, որոնք հիւանդանոցումն են եղել և պատուաստուած են եղել կովի ծաղկով։ Ջէնները սարսափի մէջ ընկաւ։ Հասկանալի է, որ պատուաստումը լինում էր թարախով, որը հիւանդանոցի օդի մէջ կորցրել էր կովի ծաղկի յատկութիւնը և դառել էր իսկական վարակիչ։ Եւ այդ Ջէնների գիւտի տեղն էր ընդունվում։ Իսկ Վուդվիլը անբաւական լինելով իւր անյաջող փորձերի տարածուելու համար, յունիսին 1800 թուին հիւանդանոցի հաշուի մէջ հաստատում էր, որ կովի ծաղիկը յաճախ ստանում է ամենավտանգաւոր հիւանդութեան կերպարանք. և այդ պատճառով խորհուրդ է տալիս՝ չմրցնել այդ ծաղկահատութիւնը հիւանդանոցում, որ-

տեղ առաջ ծաղկից մեռնում էին աւելի քիչ։

Ի՞նչ կարծիք, որ այդպիսի խորհուրդը հասարակութեան վերայ այն տպաւորութիւնն արեց, որ բոլորովին ձեռնտու չէր Ջէններին։ Իսկ այդ ամենը նորանից էր ծագել, որ անփորձ Վուդվիլը օգտուել էր կամ խառն ծաղկի թարախով, կամ բոլորովին վարակիչով, և ոչ թէ մաքուր կովինով. նորա հիւանդանոցում այդ տեսակը գտնել անհնար էր։

Ջէնները եռանդով պաշտպանվում էր, փաստեր առաջ բերելով. բայց հաւատը դէպի նա տատանվում էր, մանաւանդ որ նոր միջոցով պատուաստել չկարողանալու չարիքը ապագ տարածուեց Նոյնպէս և շնորհիւ Պիրսօնի, որը կովի ծաղկի կերպով ուղարկում էր Անգլիայի զանազան տեղեր Նոյնպիսի վարակիչ թարախ, որպիսով օգտուել էր Վուդվիլը։ Միայն Պետերսում 14 մարդ ստացել են նորանից ծանր հիւանդութիւն։

Լորդ Էդրեմոնը, որին սաստիկ զբաղեցնում էր Ջէնների գիւտը, խնդրեց նորան բացատել այդպիսի տարօրինակ երևոյթի պատճառը։ Ջէնները պատասխանեց. «Այդ չարիքը նորանից է ծագել, որ Վուդվիլը իւր հիւանդանոցում իսկական ծաղկով պատուաստել է մի քանի մարդիկների, բայց չթողնելով, որ բոլորովին հասունանայ հիւանդների մէջ, նա երբոյգ, թէ հինգերորդ օրը պատուաստել է նորանով

բնական ծաղիկը. այն էլ, միւսն էլ բռնել են և այդ պատճառով հիւանդների ծաղկի վերքերի թարախը արդէն մաքուր կովի ծաղիկ չէ եղել, այլ խառն, ուրեմն և վարակիչ։ Բացի այդ՝ ծաղկի սկզբնական թարախը կարող էր ուղղակի փչանալ հիւանդանոցի վարակուած օդի ազդեցութիւնից, և ահա՛ այդպիսի ծաղկով օգտուել է Վուդվիլը. նա էլ հէնց ուղարկել էր դաւառ, մինչև անգամ և ցամաքի երկիրները, որովհետև Պիրսօնը բացի այդ հիւանդանոցից ուրիշ աղբիւր չունէր, որտեղից կարողանար ստանալ ծաղկի թարախը, ընդունելով նորան իսկականի տեղ։ Ես աշխատեցի զսպել նորան, բայց ո՞ւր։ Վուդվիլը և և Պիրսօնը ոչ մի անհրաժեշտ զգուշութիւն չէին գործ դնում, որ այդպիսի դէպքում ամենակարևորն է։ Ոչ թէ միայն փչացած թարախից հեշտ է վարակուելը, այլ և բժշկական ունելիից, որով պատուաստում են բնական ծաղիկը»։

Այդ ժամանակին է վերաբերում և բժիշկ Պիրսօնի պախարակելի վարմունքը, որ վերին աստիճանի վիրաւորեց Ջէններին։ Դեռ 1799 թուին, երբ Ջէնների գիւտը արդէն յայտարարուած էր և հեղինակին խոստանում էր շատ օգուտներ, Պիրսօնը մտածեց կազմակերպել մի առանձին հասարակութիւն ծաղկահատութեան համար և հաւաքելով մի քանի համախոհներ, կազմեց ընկերութեան կանոնադրութիւնը

և պատրաստուեց ձեռնամուխ լինելու գործին։ Ի հարկէ նորա նպատակն այն էր, որ իւր ձեռքն առնի, որքան կարելի է շատ, նոր ծաղկահատութեան գործարարութիւնը և դորանից ահագին օգուտներ ստանայ։ Ցայտնելով իրեն ընկերութեան նախագահ, Պիրսոնը յանդգնեցաւ դիմելու Ջէնների, որ նա լինի կողմնակի աշխատակից, այսինքն այդ հաստատութեան թղթակից։ Նա մի և նոյն ժամանակ գրել էր. «Ես կարծեմ, ինձ դժուար չի լինիլ մերոնց համոզելու, որ ձեզ ընդունեն... ձեր կոչումը մեզ համարեա ոչ մի ծախսի տակ չի ձգի. ամեն մեկ մասնակցող վճարում է տարեկան մեկ գինէյ, աւել չէ. բայց ես կարծեմ, որ ձեզ կարելի կըլինի ազատել և այդ տուրքից, որովհետև դուք երևի մեզ հիւանդներ չէք ուղարկիր»։ Ջէնները, թէև շատ գրդռուեց այդ յանդգնութեան համար, բայց պատասխանեց շատ համեստ դարձուածներով։ Ահա թէ ի՞նչ գրեց նա. «Ձեր նամակը, խոստովանում եմ, ինձ շատ զարմացրեց. ինձ քիչ տարօրինակ է թւում, որ այդ հաստատութիւնը հիմնուելով ծաղկահատութեան համար, կաղմուել և սարդուել է առանց իմ գիտութեան։ Ինքն ըստ ինքեան պէտք է որ այդ ինձ համար շատ պատուաբեր լինի. անկասկած ապացուցուելով իմ գիւտի նշանաւոր լինելը, հիմայ ընդունում են բարձր ձիրքերի տէր մարդիկ. բայց մի

և նոյն ժամանակ թոյլ տուէք ինձ ասել, որ եթէ ծաղկահատութիւնը մի որ և է անուշադրութիւնից վատ կէք ունենայ, (և համաձայնեցէք, որ նա արդէն շատ դէպքերում արժանացաւ արհամարհանքի), այն ժամանակ բոլոր կեղտը ինձ վերայ կ՝ընկնի. նա ոչ մի կերպով չի ընկնի ձեզ, կամ ձերոնցից մէկի վերայ, որոնց, ինչպէս լսել եմ, հաւատացել էք բըժշկական մասը։ Գործի այդ դրութիւնը աւելի ես զգալով, քան որ և է մէկը, անհրաժեշտ եմ համարում իմ ներկայութիւնս Լօնդօնում։ Բայց այս անգամ թոյլ տուէք մերժել ձեր առաջարկած պատիւը»։

Այդ շրջանը, 1789 թուից մինչև 1801-ը, Ջէնների կեանքի ամենածանր ժամանակն էր։ Զափազանց շատ կար խռովութիւն, անյաջողութիւն, ահաճութիւն, բայց և այդ ծանր ժամանակ լինում էին քաղցր բոպէներ, որոնք քաջալերում էին Ջէնների, նորան եռանդ տալով, որ անհրաժեշտ էր մեծ գործի համար։ Ամենից թանգ էր համակրանքը իրեն գիւտի վիճակին։ Այդպէս՝ նա ստացաւ մայրաքաղաքում 33 ամենայայտնի բժիշկներից վկայական, որ նոքա անպայման ընդունում են կովի ծաղկին իբրև լաւ միջոց, որը պահպանում է բնական ծաղկի վարակումից։ Այդ իսկ ժամանակ նորան ներկայացրին թագաւորին և թագուհուն, որոնք արժանացրին նորան իրենց

ուշադրութեանը։ Կլեարէնս դուքսի հետ նա շատ անդամ խօսակցում էր ծաղկահատութեան տարածուելու հնարքների մասին. դորա հետևանքն այն եղաւ, որ Ջէնները կազմեց մի առանձին հատատութեան նախագիծ, որի նպատակն էր տարածելու ծաղկի պատուաստման միջոցը։

Է.

Ամեն մի բարերար գիւտ վաղ, թէ ուշ անպատճառ պէտք է ստանայ իւր իրաւունքները և բերէ այն օգուտը, ինչու համար որ ստեղծուել է։ Ջէնները ուրիշ հեղինակներից աւելի երջանիկ էր. բաղդը նորան տուել էր մի առանձին առաւելութիւն ապրելու մինչև այն ժամանակ, երբ նորա գիւտը յայտնի եղաւ համարեա ամբողջ աշխարհին և պարգևեց իրեն հնարողին անհամար դափնիներ և ընդհանուր օրհնութիւն։ Եւ մեռաւ ուրախ գիտակցութեամբ, թէ այն պարտքը, որ Ստեղծողը դրել էր իրեն վերայ, լիապէս կատարուած է։

Չնայելով ազգա բժիշկների կողմից անհամար արգելքների և այն ժամանակուայ հասարակութեան նախապաշարմունքներին, ծաղկահատութիւնը արագ յառաջդիմութիւններ էր անում։ Թէև Ջէնները ապ-

բում էր համարեա առանց մեկնելու իրեն բնակութեան տեղից, բայց ամեն տեղ ունէր թղթակիցներ, մինչև անդամ Ամերիկայում և Հնդկաստանում։ Նորա գիւտի լուրը շուտով տարածուեց բոլոր երկրիս վերայ։ Կարճ միջոցում նա շատ գիտնական ընկերութիւնների անդամ եղաւ. իսկ Ամերիկայի համալսարանը ուղարկեց իրաւաբանութեան դոքտորի արտօնագիր։ Դեռ 1800 թուին պահպանողական ծաղկի միջոցը մտաւ Ամերիկեան նաւատորմիղի մէջ և Ջէնների անունով և նորա պատուի համար ձուլեցին մեդալ։ Հէնց այն ժամանակ Անդղիական տէրութիւնը շոգենաւ ուղարկեց, որ անցնելով Միջերկրական ծովը, տարածեց ծաղկահատութիւնը Ջերլարտարում, Մայորկում, Մալտայում և Նէապոլում։

1800 թուին յունուարին Ջէնների հետազօտութիւնները թարգմանուեցան գաղղերէն, (յետոյ սպաներէն, գերմաներէն, հոլանդերէն, լատիներէն, ռուսերէն և չինարէն և այլն). Փարիզում բացուեց ծաղիկ-պատուաստելու մի կենդրոնական հիւանդանոց, իսկ Գաղղիայի միւս քաղաքներում ընկերութիւններ կազմուեցին նոյն նպատակով։ Երբ Ջէնների եղբօր որդին Ջօրջը Փարիզումն էր, նորան այնտեղ դրկարաց ընդունեցին և նորա պատուին փառաւոր դահլիճում ճաշ սարքեցին. պատի վերայից կախուած էր դափնիներով զարդարուած «անմահ Ջէն-

ների» պատկերը այս խօսքերով. «viro de matribus, de pueris, de populis bene merito.» (բազմերախտ մարդուն՝ մայրերից, մանուկներից և ազգերից)։

Ծաղկահատութիւնը Փարիզից անցաւ Սպանիա։ 1801 թուին Ջէնները կոպէնհագէն ուղարկեց ծաղկի թարախից, ուր շնորհիւ թագաւորի բարձր հովանաւորութեան գործ դրուեց և արագ տարածուեց։ Դանիայից ծաղկահատութիւնը շուտով անցաւ Շվէդիա և Նորվեգիա, ուր նոյնպէս գործ դրուեց։ Այդ ժամանակները իշխանուհի Լուիզայի ցանկութեամբ Ջէններն ուղարկեց ծաղկի թարախը Պրուսիա։ Իշխանուհին առաջիններից մէկը եղաւ, որ պատուաստեց իրեն ծաղիկը այդ նոր միջոցով։ Բերլինում հաստատուեց արքայական ճեմարան ծաղկի պատուաստման համար, որտեղ ժողովրդին բաժանվում էր տպած բացատրութիւններ ծաղկահատութեան մասին և խորհուրդներ օգտուելու նորանից։ Այն ծնողների համար, որոնք իրենց երեխաներին բերում էին ճեմարան, ծաղիկը կտրելուց 7 օր յետոյ ձուլեցին առանձին մեդալներ, վրէն գրուած Ջէնների անունը և նորա ծննդեան օրը։

Իտալական տէրութիւնը նոյնպէս ընդունեց ծաղկահատութեան օգուտը. այդ գործին հսկող նշանակուեց բժիշկ Սակկօն։ Իւր նամակում, որ գրուած է հոկտեմբերի 16-ին 1801 թուին, նա հաղորդում է

Ջէններին մի շատ ուրախալի լուր. Լոմբարդիայի մէկ փոքրիկ տեղում Սակկօն գտել է իսկական ծաղկի հիւթ, այսինքն գտել է ծաղկով հիւանդ կովեր։ Պատուաստողներից շատերը յետոյ ենթարկուել են ծաղկի վարակմանը, բայց նա ազդեցութիւն չէ ունեցել նոցա վերայ։ Ոչ մի բան չէր կարող աւելի դեղեցիկ կերպով հաստատել Ջէնների գիւտի բարերարութիւնը։

Բայց ծաղկահատութեան տարածուելու մէջ, ամենագործունեայ մարդն էր Վիէննայի բժիշկ Դէ-Կարրօն։ Նա ամենից լաւ հասկացել և գնահատել էր Ջէնների գիւտը. սկիզբը ծաղկի թարախը Դէ-Կարրօն ստացել էր Անգղիայից, Պիրսօն բժշկից. բարեբախտաբար ծաղկի հիւթը լաւ տեսակն է դուրս եկել և այդ պատճառով Վիէննայի բժիշկը կարողացել էր պատուաստման շատ յաջող փորձեր անել։ Ամենամեծ ուրախութեամբ Դէ-Կարրօն հաղորդել էր Ջէններին այդ յառաջադիմութիւնների մասին և մի և նոյն ժամանակ խնդրել էր նորան ուղարկել ուղղակի կովերից վերցրած ծաղկի թարախ, որովհետև Աւստրիայում անհնար է գտնել, քանի որ այնտեղի եղջերաւոր անասունների մէջ բոլորովին չկայ ծաղիկ հիւանդութիւնը։ Ի հարկէ Ջէններն ուրախութեամբ կատարեց իւր վիէննացի ընկերի և աջակցի խնդիրը և ծաղկի հիւթի հետ ուղարկեց նոյնպէս խը-

բաներ, թէ ի՞նչպէս պէտք է պահպանել նորան։

Լեհայուոց թագաւորի քոյր իշխանուհի Զամոյսկայան, որ այն ժամանակ ապրում էր Վիէննայում, ուղարկել էր Դէ-Կարրո բժշկից ստացած ծաղկի հիւթը Լեհաստան իւր աղջկան, իշխանուհի Մնիշեկին, որն իսկոյն պատուաստել էր նորանով իրեն երեխաներին և յետոյ տարածել էր ամբողջ տէրութեան մէջ։

Վերջապէս Զէնների գիւտը հասաւ և Ռուսաստան։ Այդ հոկտեմբերին էր, 1801 թուին։ Այն ժամանակ արքունիքը գտնվում էր Մոսկուայում Աղէքսանդր Ա-ինի թագադրութեան առթիւ։ Այդ ժամանակ բժիշկ Ֆրիզէն ուղարկել էր Բրեսլաւլից փղոսկրէ ասեղների վերայ ծաղկի թարախի մասնիկները խրատներով, թէ ի՞նչպէս պէտք է օգտուել նորանից։ Այրիացած թագուհին այդ ծաղկի հիւթը իրեն հովանաւորութեան տակ առաւ, և կամեցաւ, որ այն առաջին երեխան, որ Ռուսաստանում կրպատուաստուի կովի ծաղկով, կրէ մի անուն, որ յիշեցնէ մեծ գիւտը։ Առաջին փորձի համար բերին որբանոցից մի աղջիկ, որը նոր միջոցով պատուաստուեց և ստացաւ «ծաղկահիւթեան» ազգանուն (Вакцинова)։ Այդ երեխան ապահովուեց ամբողջ կեանքում շնորհիւ թագուհու առատաձեռնութեան։ Այդ ժամանակուանից ծաղկահատութիւնը քիչ-քիչ սկսեց տարածուել

Ռուսաստանում և ունեցաւ հետևողներ։ Թագուհին պատուեց ինքնաձեռագիր նամակով և թանգագին ընծաներով Զէններին։ Մի քանի տարուց յետոյ Աղէքսանդր Ա. շատ եռանդով աջակցում էր ծաղկի պատուաստելու տարածմանը։ Նորա կամքը կատարողն էր բժիշկ Բուտտայ, որ ճանապարհորդեց համարեա ամբողջ Ռուսաստան այն նպատակով, որ ամեն տեղ մտցնէ ծաղկահատութիւնը։ Կազմուեց և հրատարակուեց բժշկական-մարդասիրական ընկերութեան հաշուով մի բրոշիւր «Խրատ ծաղկի պատուաստման մասին», որ Ղազանում յետոյ թարգմանուեց թաթարերէն, տարածուեց օտար ցեղերի մէջ և հասաւ Սիբիր՝ Իրկուտսկից մինչև Կամչատկա կղզիները և հիւսիսային Չինաստան։

Չնայելով ահագին դժուարութիւններին, կովի ծաղկի հիւթը հասաւ և Հնդկաստան։ Զէնները մի քանի անգամ ուղարկեց այնտեղ ծաղկի թարախ, բայց ճանապարհին փչացաւ։ Յետոյ նա հնար գտաւ նորան թարմ պահպանելու և պէտքական անելու երկար ժամանակուայ ընթացքում, բայց այդ գտաւ այն ժամանակ, երբ արդէն կովի ծաղկի հիւթը շնորհիւ Դէ-Կարրոյի աշխատութեանը և ճարպկութեանը ստացուել էր Հնդկաստանում և արագ տարածուել էր այնտեղ։ Զէնների առաքինի աշխատակիցը Վիէննայում մոռացեց այսպիսի միջոց կովի

ծաղկի հիւթը Հնդկաստան ուղարկելու. նա անդ-
ղեական քրքրած քաթանը թաթախեց թարախով,
դնելով նորան երկու ապակիների մէջ, որի կողքի
ձեղքերը ամրացրեց մոմով և դարսեց արկղների մէջ,
որոնք լեքն էին թղթի կտորտանքներով: Այդ կեր-
պով կովի ծաղկի հիւթը գնաց Բոսֆորից սկիզբը
Բաղդադ անգղեական հիւպատոսի մօտ. այնտեղ
ապրիլի 5-ին, 1802 թուին, նորանով շատ մարդիկ
պատուաստեցին, իսկ յետոյ նորից ճանապարհ ըն-
կաւ դէպի Բասսուրա՝ հիւպատոսի մօտ, որտեղ
40 մարդ պատուաստեցին, որոնց մէջ կային և մի
քանի նաւաստի, որ շուտով վերադառնալու էին
Հնդկաստան՝ Բոմբէյ: Այստեղ կովի ծաղկի հիւթը
յուլիսի վերջին հասաւ: Բոմբէյից տարածուեց ամ-
բողջ Հնդկաստան առանց դժուարութեան. բնիկները
լաւ աչքով էին նայում դորա վերայ, որովհետև նա
կովից էր առաջ եկել. իսկ այդ կենդանուն հնդիկ-
ները սուրբ էին համարում: Կառավարութիւնը իւր
կողմից բոլոր միջոցները գործ դրեց, որ շուտով և ամէն
տեղ Հնդկաստանում տարածուի ծաղկի պատուաս-
տումը. նա մինչև անգամ որոշեց ընծայ տալ 5 ֆունտ
ստերլինգ նորան, ով որ պատուաստէ 100 մարդու:

Հեսաքրքիր է այն հնարը, որի միջոցով սպանա-
ցիներն ուղարկեցին ծաղկի թարախը Ատլանտեան
ովկիանոսով դէպի իրենց ամերիկական գաղթական-

ները: Այն ժամանակ ծովագնացութիւնը դէպի Ամե-
րիկա շատ երկար էր տևում, այնպէս որ այդքան
ժամանակ կովի ծաղկի հիւթը թարմ պահելը ան-
հնար էր: Սպանական կառավարութիւնն օգտուեց
Ջէնների հնարած միջոցով. նաև նստեցնում էին մի
քանի երեխաների. գնալուց առաջ նոցանից մէկին
պատուաստում էին թարմ կովի ծաղկով. նա իւր
ժամանակին բռնում էր և դուրս էր տալիս լաւ
ծաղկի վէրքեր, որոնցից հանում էին թարախը, երբ
նոքա լաւ հասունանում էին և պատուաստում էին
միւս երեխային. դորանից տալիս էին երրորդին, եր-
րորդից չորրորդին և այլն. այդպէսով, քանի որ նաւը
դեռ ճանապարհին էր, ծաղկի թարախը, այսպէս
ասած, պահպանվում էր մարդկային կազմուածքի
մէջ: Վերջին երեխան, որ պատուաստուած էր նաւի
վերայ և ծաղիկը հասաւ Ամերիկային մօտենալու
ժամանակ, թանգագին հիւթի տարածողն եղաւ
կենդրոնական և հարաւային Ամերիկայում: Ակապուլ-
կոյից խաղաղ ովկիանոսի վերայով կովի ծաղկի հիւ-
թը ճանապարհ ընկաւ նոյն կարգով դէպի Փիլիպ-
պեան կղզիները, Մակաօ և Կանտոն:

Այն ժամանակ կատարուեց Ջէնների մարգարէու-
թիւնը. «կրգայ ժամանակ, երբ կովի ծաղկի հիւթը
կրտարածուի ամբողջ երկրիս երեսը:

Ը.

Ջէնների գիւտի բարիքը պարզվում էր աւելի և աւելի, և շնորհակալութեան զգացմունքը դէպի հը-նարողը օրէ-ցօր արտայայտվում էր աւելի բարձր: Ամսաթերթերում սկսեցին տպուել, որ անվայել է մի մեծ ցեղի թողնել զգաստ Ջէններին առանց վարձատրութեան, որին նա համարում էր իւր որդին և որով պէտք է պարծենայ ամբողջ աշխարհի առաջ:

Անգղիացոց հասկացողութեամբ Ջէններն իրաւունք ունէր խնդրելու իրեն համար ազգային պարգև: Բայց խօսել իւր ծառայութիւնների, աշխատանքների մասին, հաշուել իւր բերած օգուտները և նոցա համար պարգև խնդրել, այդ 'ի հարկէ անյարմար գործ էր: Կասկած չկայ, որ Ջէնները պարգև ստանալու համար չէր աշխատում, այլ միայն թշուառ մարդկութեան օգուտ բերելու ցանկութիւնից ղըդուած. այդ պատճառով նա չէր վճռվում երկար ժամանակ յայտնել իւր իրաւունքները այդ շնորհակալութեան մասին. բայց ընտանեկան գործերը, մօտեցող ծերութիւնը և գլխաւորապէս ընկերների ստիպողական համոզմունքը, ստիպեցին նորան վերջապէս ձնշելու իւր մէջ այդպիսի դէպքերում եղած բնական հպարտութիւը և դիմելու այդ ան-

յարմար գործին: Մայիսի 18-ին 1802 թուին նա տուեց խորհրդարանին պաշտօնական խնդիրք, այսպիսի բովանդակութեամբ.

«'Ի նկատի առնելով.

1) Խնդրողի գիւտը թէ այն հիւանդութիւնը, որ երևում է ընտանի կենդանիների մէջ մի առանձին կերպ և յայտնի կովի ծաղիկ անունով, շատ հեշտութեամբ և անվտանգ կարելի է պատուաստել մարդուն և ազատարար ազդեցութիւն ունի միանգամայն պահպանելու ամբողջ կեանքը ծաղկի վարակումից այն մարդուն, որ պատուաստուել է դորանով:

2) Որ խնդրողը առարկան աշխատասիրութեամբ հետազօտելով, առանց հոգս քաշելու իւր անձնական և մանաւոր օգտի մասին և աշխատելով հաստատել բարօրութիւնը և ապահովութիւնը քաղաքացիների ու ամբողջ մարդկային ցեղի, չկամեցաւ ծածկել իւր գտած պատուաստման նոր միջոցը, այլ անյապաղ յայտարարեց ամէն բան ընդհանուրի գիտութեան, ինչ որ գիտէր և հաղորդակցութեամբ ուրիշ երկրների և ամբողջ աէրութեան բժշկների հետ եռանդով աշխատեց տարածել իւր գիւտը և իւր աշխատանքների պտուղը, ինչքան որ հնարաւոր էր:

3) Որ այդ դէպքում խնդրողի ցանկութիւնը միանգամայն կատարուեց, որովհետև կովի ծաղկով

պատուաստումը արդէն տարածուած է մեծ մասով լուսաւոր աշխարհի մէջ և մանաւանդ օգուտ բերից հայրենիքին և կառավարութեան կամքով տարածուեց զօրքի և նաւատորմիղի մէջ։

4) Որ այդ ծաղկի պատուաստման համար նշանակած նոր միջոցը յաղթելով բնական ծաղկին, ոչնչացնում է ընդ միշտ նորա վարակումը։

5) Որ անհամար փորձերը, որոնք կարևոր էին նոր միջոցի զարգացման և կատարելագործման համար, ոչ թէ միայն շատ ժամանակ են խլել խնդրողից, այլ և նորան ենթարկել են բաւական ծախսերի ու անհանգստութիւնների և հեռացրել են նորան սովորական, իրեն կոչման վերաբերեալ պարապմունքներից, որոնք կարող էին նորա ամբողջ կեանքը ապահովել, այն ինչ նոր արհեստը դեռ չէ կարող նորան վարձատրել։

Խնդրողը այդ բոլոր վերոյիշեալների առթիւ յայտնելով իւր յարգանքը բարձր ժողովին, խոնարհաբար խնդրում է ուշադրութիւն դարձնել ներկայացրած խնդիրքի շարժառիթի վերայ և շնորհել նորան մի պարգև, ինչ որ ժողովը կըբարեհաճի»։

Խորհրդարանը ստանալով այդ խնդիրքը, նշանակեց մի առանձին յանձնաժողով, որը պարտական էր որոշելու. 1) Ջէնների զիւտի օգուտը. 2) արդեօք հաստատ այդ զիւտը պատկանում էր խնդրողին, թէ

մի որ և է ուրիշին և 3) տեղեկանալ այն օգուտների մասին, որ ստացել է հնարողը այդ զիւտից։

Քննութիւնը սկսուեց։

Անկասկածելի օգուտը միաձայն խոստովանեցին բոլոր բժիշկները և ոչ-բժիշկները։

Ջէնների զիւտի սեփականութեան իրաւունքը, թէև մի քանիսը հերքում էին (Պիրսօն), բայց հաստատուեց շատ վկաներով, որոնցից մէկը՝ Սէր Գոմ անունով՝ ցոյց տուեց, որ Ջէնները դեռ 1788 թուին տարել էր Լօնդօն կովի ծաղկի նկարը, որը պարզ ցոյց էր տալիս նորա նախապատրաստական գործերը ծաղկահատութեան հարցին վերաբերեալ։ Գարդները հաղորդեց իւր զբօսնելու մասին Ջէնների հետ մայիսուան օրը, 1790 թուին, Բրիստօլիայի ճանապարհի վերայ, երբ ընկերը իւր զիւտի գաղտնիքը բացեց և խնդրից առ ժամանակ չտարաձայնել։ Գրանուեցան մարդիկ, որոնք յիշեցին թէ 1771 թուին Գէնտերը Ջէնների հաղորդած լուրերի մասին ասել է, թէ կովի ծաղիկը բարերար յատկութիւն ունի, որ պաշտպանում է մարդիկներին բնական ծաղկից։ Էլի շատ ցուցումներ եղան, որոնք այսպէս թէ այնպէս հաստատեցին, որ պատուաստման զիւտը անշուշտ պատկանում է Ջէններին։

Իսկ ինչ վերաբերում է օգուտներին, որ Ջէնները ստացել է իւր զիւտից, յանձնաժողովը ամենից ա-

ռաջ հարց դրեց որոշելու, թէ ի՞նչ աշխատանքներ, ծախսեր և ժամանակի կորուստ ունեցել է Ջէնները այդ գիւտից։ Իսկ որ երկար ժամանակ ծաղկահատութեան հետազօտութիւնը հեռացրել է նորան արդիւնաւոր պարապմունքներից, այդ մասին խօսք անգամ չէր կարող լինել։ այդ պարզ էր ամենի համար, ով որ գոնէ հարեւանցի Ջդիտէր Էնների արած անհամար խուզարկութիւնները, փորձերը, նկարները, յիշատակարանները և ճանապարհորդութիւնները իրեն գիւտի համար։ Յետոյ, երբ այդ գիւտը հրատարակուեց, Ջէնները համարեա չէր շահվում նորա օգուտներով, որովհետև բոլոր բժիշկները սկսեցին պատուաստման նոր միջոցը գործադրել և նոցանից ամեն մէկը, 'ի հարկէ, այդ գործից աւելի մեծ օգուտ էր ստանում, քան թէ ինքը հնարողը, որի աշխատանքը, հոգսը և չարչարանքը գլխաւորապէս այն էր, թէ որչափ կարելի է շուտ տարածուի այդ նոր պատուաստումը երկրիս վերայ։

Բացի այդ՝ Ջէնները, աշխատելով իւր գործի վերայ, միշտ ապրում էր իւր տնակում մի յետ ընկած գիւղում, ուր չէր կարող լինել ընդարձակ և արդիւնաւոր գործադրութիւն։ Իսկ բացի այդ բոլորից՝ նոր միջոցի հետազօտութիւնների ժամանակ՝ Ջէնները ստիպուած էր անհամար ծախսեր անելու, որոնք ծանրացել էին նորա հաւեստ անտեսութեան վերայ։

'Ի նկատի առնելով այդ բոլոր հանգամանքները և ընդունելով, որ Ջէնների գիւտը չափազանց բարերար էր, քանի որ մինչև նորա յայտնուելը միայն Բրիտանիայում ամեն տարի ծաղկից մեռնում էր, միջին թուով, 45,000 մարդ, յանձնաժողովը խոստովանեց, որ դոքտոր Էդուարդ Ջէնները ազատիչ է միլլիոնաւոր մարդիկների, որ և արժանի է շնորհակալութեան և վարձատրութեան անդղլիական ազգի կողմից, որի մէջ նորան վիճակուած էր ծնուել և ցոյց տալ իւր աստուածատուր հանճարը։

Երկար զրաղրութիւնից յետոյ տէրութեան դանձապետի հետ, որից մասամբ կախուած էր վարձատրութեան չափի որոշումը, վճռուեց Ջէնների տալ միանգամից 10,000 ֆունտ ստերլինգ։

Ջէնների ընկերները չափազանց վրդովուած էին այդպիսի աննշան վարձատրութեան համար։ Ամեն տեղից լսվում էին խորհուրդներ, յանդիմանութիւններ ժլատութեան և անշնորհակալութեան համար, որոնք վայր էին ձգում Անդղլիայի արժանաւորութիւնը։ Ասում էին, թէ Ջէնները, ինչպէս խոստովանեց կառավարութիւնը, ամեն տարի փրկում էր մահից 40,000 մարդ, որոնք իրենց աշխատանքով աւելացնում են երկրի հարստութեանը ամենաքիչը 200,000 ֆունտ ստերլինգ. ուրեմն ինչպիսի անթիւ գումարներ կը հաւաքէ իւր հայրենիքի համար ապա-

գայում։ Օրինակներ էին բերում, թէ ինչպէս ուրիշ երկրներ կարողանում էին վարձատրել իրենց որդիներին նոցա աւելի քիչ մեծ ու բարերար գործերի համար, քան թէ Ջէնների գիւտն էր։ Առաջ էին բերում, թէ հնարողը ծաղկի հարցի համար աշխատելով, մեռցրել է իւր կեանքի ամենալաւ 30 տարիքը, որի ընթացքում նա բժշկութեամբ պարապելով, կարող էր խնայողութեան միջոցով կազմել ծերութեան ժամանակ աւելի մեծ գումար, քան թէ այդ 10,000 ֆունտ ստերլինգը։ Իսկ ո՞ւր կրմնան նորա անասելի աշխատանքներն ու բարոյական տանջանքներն, որոնց նա համբերել է և որոնք անկասկած նորա առողջութեան վերայ ներգործել են։

Ջէնների բարեացակամները այնպէս էին հոգս քաշում նորա վիճակի բարւոքման մասին և այնպէս վճռողաբար պահանջում էին աւելացնել վարձատրութիւնը, որ 4 տարուց յետոյ տէրութեան դանձապետը լորդ Հենրի Պեսին ստիպուած էր դիմել խորհրդարանին այս խնդիրքով՝ առաջարկել արքայական բժշկական ընկերութեանը քննել, թէ ի՛նչպիսի յառաջադիմութիւն է արել պատուաստումը վերջին տարիներում և թէ ի՛նչ պատճառներ են յետաձգում նորա տարածուելը Հայրենիքի մէջ և եթէ երևի, որ նա նոյնպէս բարերար ազդեցութիւն կունենայ Անգղիայում, ի՛նչպէս ուրիշ

տեղերում, այն ժամանակ քննել, թէ արդեօք Ջէնները վարձատրուած է ծառայութիւնների համեմատ։

Այդ յայտարարութեան առթիւ խորհրդարանը որոշեց խնդրել թագաւորին, որպէս զի նա յանձնէ բժշկական ընկերութեանը քննութիւն սկսել պատուաստման յառաջադիմութեան մասին։

Յանձնարարութիւնը կատարուեց և քննութիւնը նորից սկսուեց։

Բժիշկները և նախանձողները, որ Ջէնները բաւական ունէր, իրար անցան և գլուխները բարձրացրին։ Հիմայ նոցա յարմար առիթ եղաւ հնարողին վշտացնելու. ամեն միջոցների դիմել էին, որպէս զի վայր ձգեն Ջէնների նշանակութիւնը և արժանաւորութիւնը. նորան սպաղրութեամբ անուանում էին խաբեբայ. զուրս եկան ուրուապատկերներ և նկարներ, որոնց վերայ երևում էին թէ ինչպէս կովի ծաղկով պատուաստած մարդը կամաց-կամաց դառնում է եղ, նորա երեսը դառնում է մռութ, մարմինը ծածկվում է մազերով, ճակատին դուրս են գալիս եղջիւրներ և այլն։

Բայց այդ բոլոր անարժան ցոյցերը չօգնեցին Ջէնների չարակամներին։ Քննութիւնը կատարվում էր ամենամեծ անաչառութեամբ և չափազանց զգուշութեամբ։ Տարուայ ընթացքում հաւաքուեցին շատ վկայութիւններ և ծաղկահատութիւններ։ Խնամա-

տարութեամբ հաւաքելով նոցա, բժշկական ընկերութիւնը եկաւ բարեյաջող եզրակացութիւնների։ Ծաղկահատութեան տարածման ահագին քանակութիւնը և նորանից ստացուած անչափ օգուտը հիմայ վերջնականապէս ընդունուեց անկասկածելի ապացոյցների տեղ։

Այդ առթիւ յուլիսի 20-ին, 1807 թուին, պետական գանձապետը առաջարկեց խորհրդարանին տալ Ջէններին վարձատրութիւն էլի 10,000 ֆունտ ստերլինգ, բայց խորհրդարանը ձայների բազմութեամբ կրկնապատկեց այդ գումարը և Ջէնները ստացաւ 20,000 ֆունտ ստերլինգ։

Բացի այդ ազգային շնորհակալութեան զգացմունքից և համակրութիւնից Ջէնները բաղդ ունեցաւ ստանալու մի քանի անգամ երախտագիտութեան հաւատիք մանաւոր մարդիկներից իւր գիւտի համար։ Այդպէս իրեն հայրենիքի Գլուխստր իշխանութեան նշանաւոր բնակիչները ընծայեցին նորան նուրբ շինուած թանգագին արծաթեայ սերվիզ։ Հնդկաստանի բնակիչները սաորագրութեամբ հաւաքեցին 7383 ֆունտ ստերլինգ և ուղարկեցին «անմահ հնարողին»։ Գիտական ընկերութիւնները, համալսարանները և ճեմարանները ուղարկեցին նորան վկայականներ՝ նշան իրենց յարգանքի։ Նորան գրում և վարձատրում էին շատ թագաւորաղն անձինք։ Գոռոզ Նապոլէոնը մէկ անգամ դէպք ունեցաւ յայտնելու նորան իւր յարգանքը։

Փարիզում տանջվում էին մի քանի անգղիական գերիներ։ Նոցա ազատութեան համար բանակցութիւն կար. բայց Նապոլէոնը յամառուել էր և բանակցութիւնը հետևանք չունեցաւ. այն ժամանակ մի քանի դժբախտների համար միջնորդեց Ջէնները և սկսեց խնդրել, որ վերադարձնեն նոցա ազատութիւնը. այդ միջնորդութեան մասին յայտնեցին Նապոլէոնին։

—Մահ, Ջէնն՝ը,—ասաց կայսրը աշխուժով.—դորան կարելի չէ մերժել. ազատեցէ՛ք։

Թ.

Ամեն տեղից ստացուած լուրերը ծաղկահատութեան յաջողութեան մասին 'ի հարկէ շատ ուրախացնում էին Ջէններին։ Նա հիմայ ունեցաւ գործին անձնուէր աշակերտները, որոնք աշխատում էին կատարելագործել ծաղկի պատուաստումը և նկատողութիւններ ու փորձեր էին անում։

Այդպիսի մարդիկների խելք մասնակցութեամբ գործը արագ առաջ էր գնում։

Բայց մի և նոյն ժամանակ բաւական ուրդելաւոր հանգամանքներ կային և համարեա թէ նոցանից ամենանշանաւորը ինոկուլեացիան է, որ չնայելով

ծաղկահատութեան ամենուրեք ընդունելուն, դեռ շարունակվում էր և պահպանվում այն մարդիկների մէջ, որոնք չէին հաւատում Ջէնների դիւային։ Ծաղկի պատուաստման այդ երկու միջոցների ամենուրեք գոյութիւնը շատ վնասում էր ծաղկահատութեանը. քանի որ պահպանվում էր ինոկուլեացիան, հաշուել դժուար էր ճշտութեամբ այն հետևանքները, դէպի որը տանում է Ջէնների դիւտը, որովհետև ինոկուլեացիան, ինչպէս վերևը ասուեց, ընդհանրապէս օգնում էր միայն ծաղկի տարածուելուն. նա պահպանուեց միայն մինչև 1822 թիւը, երբ բոլորովին գործադրուելուց դուրս եկաւ մասամբ Ջէնների դիւտի, մասամբ էլ վարչական կարգադրութիւնների շնորհիւ։ Յետոյ մի ուրիշ փորձանք երևաց. 1824 թուին սկսեցին յաճախ պատահել ծաղկահատութեան անյաջող փորձեր. Ջէններին հաղորդում էին որ շատերը, նայելով, որ առաջ պատուաստուած են եղել կովի ծաղկով, յետոյ ստացել են իսկականը, իսկ մի քանիսն էլ ունեցել են վարակման բոլոր նշանները, նոյն իսկ պատուաստելուց։ Հասկանալի է, որ այդ բոլորը առաջ էր գալիս թարախի վատութիւնից որով պատուաստում էին։ Ջէնների տեղեկութիւններից դուրս եկաւ, որ շատ բժիշկներ, պատուաստման համար թարախն առնում են ծաղկի երևալուց 13 օր յետոյ, այն ինչ նա պէտքական է լինում միայն

եօթերորդից մինչև տասերորդ օրը. մի քանի բժիշկներ չէին կարող որոշել իսկական ծաղկի վէրքերը ոչ-իսկականից, թէև այդ բոլորովին դժուար չէր. նոքա մինչև անգամ չգիտէին, որ պատուաստման համար թարախը միշտ պէտք է հեղուկ լինի և որ նորան պէտք է վերցնել ոչ թէ կամեցած ժամանակ, այլ երբ ծաղկի վէրքը լիակատար հասունանայ, որովհետև խակ ծաղկի հիւթով պատուաստուողները յետոյ հեշտութեամբ կարող են վարակուել բնական ծաղկով. կովի ծաղկի հիւթից վարակուելը նոյնպէս առաջ էր գալիս նորա փչացած լինելուց և այդ իսկական կովի ծաղկի հիւթ չէր, այլ թարախ, որը խառն էր վարակիչի հետ, կամ փչացած էր վերջինիս ազդեցութեան տակ։

Ջէնների չարակամներն առաջ էին բերում այդ անաջողութիւններն իբրև ապացոյց, որ ծաղկահատութիւնն առհասարակ անզօր է. մինչև անգամ ասում էին, որ նա ինքը չէ հաւատում նորան, որովհետև չէ վճռել իրեն երևեխաներին պատուաստել կովի ծաղկով, այլ պատուաստել է իսկականով։ Ուզենալ, չուզենալ Ջէնները ստիպուած էր արդարանալ, որովհետև այդպիսի մեղադրանքները կարող էին տատանել հասարակաց հաւատը դէպի նա։ Նորա բացատրութիւններից երևեցաւ, որ յիրաւի նա իւր երկու մեծ աղջներին պատուաստել է բնական

ծաղկով, բայց այդպէս արել է նորա համար, որ այն ժամանակ նա դեռ չէր սկսել կովի ծաղկի հիւթով պատուաստել. իսկ Բօբերտը երկրիս երեսին առաջինների մէկն է եղել, որ պատուաստուել է կովի ծաղկով, բայց նա չգիտեմ ինչո՞ւ չբռնեց: Ջէնները այն ժամանակ ապրում էր Զելանդամի ջերմուկներում և չէր կարող կրկնել պատուաստումը, չկամենալով վախեցնել հասարակութեանը, որը եկել էր այնտեղ բժշկուելու և կարող էր կասկածել, որ այդ տեղում սկսվում է ծաղկի վարակումը. յետոյ Բօբերտը վարակման վտանգի մէջ էր, բայց հակառակի նման այդ ժամանակ Ջէնները չունէր կովի ծաղկից և շտապեց պատուաստել իսկականով:

Բայց չնայելով այդ բացատրութիւններին, շատ ամսաթերթեր շարունակում էին պատերազմել Ջէնների հետ:

Մանաւանդ մէկ դէպք 1811 թուին Ջէններին շատ յուզեց: 10 տարի զորանից առաջ ինքը պատուաստել էր մի հարուստ և ազնուական ընտանիքի աղջի ծաղիկը և յանկարծ այդ աղջն, որ հիմայ արդէն 26 տարեկան երիտասարդ էր, հիւանդացաւ իսկական ծաղկով: Չորրորդ օրը տաքութիւն երևեցաւ. երեսը ծածկուեց ծաղկի վէրքերով, մէկ խօսքով բոլոր վարակման նշանները կային. սկիզբը հիւանդութիւնը այնպէս ծանր էր և արագ զարգանում էր,

որ բժիշկները յոյս չունէին թէ նա կառողջանայ: Բայց աղջն բարեբաղդաբար շուտով բոլորովին առողջացաւ. նկատուեց, որ այդ հիւանդութեան վերջին շրջանը շարունակուեց աւելի քիչ, քան թէ լինում է սովորական բնական ծաղկի ժամանակ. իսկ այդ անկասկած նորանից էր յառաջ եկել, որ հիւանդի կազմուածքի մէջ եղել է հակառակ ազդեցութիւն, որը կովի ծաղկի հիւթով մտել է նորա մէջ:

Այդ դէպքը շատ աղմուկ բարձրացրեց: Ծաղկահատութեան հակառակորդները սկսեցին կրկին յարձակուել Ջէնների վերայ. բայց նոքա մոռանում էին, թէ երբեմն ծաղիկ հանում են այն մարդիկ, որ ունեցել են յառաջ իսկականը. այդ դէպքերը հաղուադիւտ են, բայց պատահում են: Իսկ դորանից հետևում է, որ թէ բնական և թէ պատուաստած ծաղկի ոյժը, թէև շատ մեծ է, բայց անպայման չէ. արդէն բաւական է այն, որ նա մեծ մասամբ ապահովում է հիւանդութիւնից: Եւ այդ է մարդիկների արդարութիւնը. քանի որ Ջէնների գործադրութեան ժամանակ ոչ մի անյաջողութիւն չէր երևում, այն ժամանակ բոլորը լուռ էին. բայց ահա, երբ պատահեց հիւանդութեան կրկնումը, միակ դէպքը, աղմուկ բարձրացաւ. այդ մէկ դէպքը օրինակ բերելով, յայտարարում են թէ ծաղկահատութիւնը առհասարակ անպէտք է:

Մի և նոյն ժամանակ տարէցտարի քանի գնում աւելի և աւելի հաստատվում էր կովի ծաղկի հիւթի բարերար ազդեցութիւն. 1812 թուի հաշիւներից երևում է, որ մի քանի երկրներում ծաղկահատութիւնը բոլորովին արմատախիլ է արել ծաղիկ հիւանդութիւնը: Այդպէս եղել է Գաւառնայում, Իսպանիայի հարաւ-ամերիկական գաղթականների մէջ, Միլանում և Վիէննայում: Գաղղիայում այդ ժամանակներն արդէն պատուաստել էին 2,671,662 մարդիկների և այդ ահագին թուից յետոյ միայն եօթ հոգի վարակուել էին: Ռուսաստանի պալատական բժիշկ Կրիչտոնը սեպտեմբերի 12-ին, 1812 թուին, ուղարկել էր Ջէններին մի տեղեկագիր, թէ ամեն մի նահանգում, սկսած 1804 թուից մինչև 1812 թիւը, օրչափ մարդու են պատուաստել: Եւ այդ տեղեկագրից երևում է, որ բոլոր պատուաստած երեխաների թիւը հասնում է մինչև 1,235,597-ի: Եթէ ուղիղ է, որ յառաջ ծաղկից ամեն 1 երեխայից մէկը մեռնում էր, ուրեմն հիմայ հաստատ կարելի է ասել, որ Ջէնների գիւտը մահից փրկել է 178,514 մարդիկներին: Աղէքսանդր Ա. կայսրը շատ համակրութեամբ էր վերաբերվում դէպի ծաղկահատութեան գործը և ամեն միջոց գործ էր դնում նորան տարածուելու համար: Մայիսի 3-ին, 1811 թուին, նա հրաման տուեց, որ ամեն մի նահանգում

և գաւառում հաստատուեն ծաղկի յանձնաժողովներ: Ռուս ժողովուրդը այն ժամանակ շատ կոպիտ և տգէտ դրութեան մէջ էր. ծաղկի պատուաստման վերայ նա նայում էր ինչպէս «սատանայի կնիքի» և այդ պատճառով ամեն կերպ խոյս էր տալիս նորանից. ռուս մարդը աւելի շուտ պատրաստ էր մեռնելու, քան թէ թոյլ տալու, որ թեւի վերայ ձեղքեր անեն և մէջը ծաղկի թարախ լցնեն: Տէրութիւնը այդ լաւ յայտնի էր և նա ամեն ջանք գործ դրեց մրցելու նախապաշարմունքների հետ. հոգևորականութեան վերայ պարտ դրուեցաւ քարոզելու ժողովրդին և համոզելու, որ թոյլ տայ ծաղիկը կտրելու: Ուրիշ միջոցներ էլ գործ դրուեցին, բայց ընդ այսմ դոյա, ծաղկահատութիւնը Ռուսաստանում շատ դանդաղ էր տարածվում, թէև նորա լաւ պտուղները արդէն զգացվում էին:

1818 թուին սարսափելի ծաղիկ էր ընկել Էդինբուրգում և Շոտլանդիայի միւս քաղաքներում. բայց նորա ոյժը արդէն բաւական թուլացել էր Ջէնների գիւտի շնորհիւն: Բժիշկ Կրօսսը այդ ժամանակ բժշկում էր Նորվիչում 603 հիւանդ: Այդ թուից 200-ը առաջ չեն ունեցել ծաղկի ոչ մի տեսակը. նոցանից մեռել են 46, այսինքն չորսից մէկը. 297 հոգի առաջ ունեցել են բնական ծաղիկ և նոցանից ոչ մէկը չէ մեռել և վերջապէս 91 հոգի, որ կովի

ծաղկով պատուաստուած են եղել, բոլորը նոյնպէս լաւացել են: Ամբողջ քաղաքում 3000 մարդուց, որոնք առաջ չեն ունեցել ծաղկի ոչ մի տեսակը, 530 մեռել են (1/6), իսկ 10,000 մարդ, որոնք առաջ ծաղկի են հանել բնական, կամ պատուաստած կերպով, թէև ապրում էին վարակուած մթնոլորտի մէջ, համարեա՛ բոլորն էր անվնաս մնացին: Այն ժամանակ բոլոր բժիշկները համաձայնեցին, որ կովի ծաղկի հիւթը, թէև ոչ միշտ պահպանում է մարդուն հիւանդութիւնից, բայց ազատում է մահից, և հէնց հիւանդութիւնն էլ չպատուաստուած մարդիկների հիւանդութիւնից անհամեմատ թեթև է լինում:

1814 թուին, երբ Նապոլէօնի պատերազմները վերջացան, դաշնագիր թագաւորները այցելեցին Լօնդօն: Ջէններին ներկայացրին մեծ իշխանուհի Եկատերինա Պավլովնային և նա հիացած մնաց նորա սիրալիր վարմունքից. և ռուսաց կայսրը ասաց նորան. «Դոքտոր Ջէններ, դուք պէտք է որ շատ բաղդաւոր լինէք. մարդկութեան համար ձեր տրած բարիքը պէտք է լինի ձեզ համար երջանկութեան մի անհատնելի աղբիւր, և ես ուրախ եմ լսելով, որ դուք վայելել էք մարդիկների շնորհակալութիւնը, գովեստը, և երախտագիտութիւնը»:

Ժ.

Ջէններին կեանքի մեծ խնդիրը վճռուեց և հիմայ նա կարող էր պարզ հայեացքով և հոգու հանդարտ ուրախութեամբ նայել իւր երկար տարիների աշխատանքի հետևանքների վերայ: Ցուզմունքները, ծանր հոգսերը, անյաջողութիւնները, թշնամիները, ամէն բան մոռացվում էր այդ մեծ գիւտի առաջ, որ հիմայ ամուր հաստատուել է երկրիս վերայ և որի համար ամէն տեղից օրհնէնքներ էին լսվում հնարողի անունով: Ցայտնի Գաղղիացի գիտնական Կիւվէն ասել է, որ եթէ ծաղկի պատուաստումը մեր դարու միակ գիւտը լինէր, միայն այդ էլ բաւական էր, որ նորան միշտ փառաբանէինք: Եւ այն ժամանակուայ ամենալաւ մարդիկը խոստովանում էին այդ խօսքերի ճշմարտութիւնը:

Ջէնները չհեռացաւ իւր հանդարտ ու սիրելի ագարակից, այն է Զենտրիի անակից Բերկլայում: Այնտեղից նա վարում էր իւր ընդարձակ թղթակցութիւնը. այնտեղ գալիս էին նորա ընկերները և այնտեղ նա շարունակում էր իւր գիտական պարապմունքները. նա հիմայ համարեա՛ միայնակութեան մէջ էր ապրում: 1815 թուին նորա մեծ որդին Էդուարդը մեռաւ, իսկ դրանից 5 տարի առաջ զրկուեց

կնոջից. փոքր որդիքը դեռ վարժարաններումն էին և միայն եղբօր որդի Սաէֆէնը համալսեա՛ միշտ մօտն էր լինում։

Կեանքը սահում էր հանդարտ ու խաղաղ այդ միայնակութեան մէջ, որը Ջէններն երբէք չէր վճռում փոխելու մայրաքաղաքի աղմուկի հետ։ Ընկերական խօսակցութիւնները, գիւղական դատաւորի պաշտօնը, գիտական զբաղմունքները,—ահա՛ թէ նա հիմայ ինչով էր ապրում։ Նա գեղեցիկ սարգեց ագարակը, ծաղկոց և պարտէզ տնկեց, անտառներ դնեց։ Ոչ հեռու այդտեղից մինչև հիմայ դեռ կայ Բարկլէյի գերեզմանոցի զանգակատունը, որն մինչև ամենավերին ծայրը փաթաթել է կանաչ և խիտ բաղեղը։ Խորին պատկառանքով անցորդները կանգնում էին այդ բաղեղի առաջ և խոնարհեցնում գլուխները... Այդ տնկել էր Էդուարդ Ջէնները իւր կեանքի վերջին տարիներում։ տնկելիս ասաց նա. «Ո՞վ գիտէ, դուցէ՛ այս ծիլը փաթաթէ մեր եկեղեցու ամբողջ զանգակատունը»։ Այդպէս էլ եղաւ։

Ջէնների պարապմունքի սենեակը, որտեղ նա անցնում էր իւր աշխատանքի ժամերը, նման էր մի թանգարանի լի ամէն տեսակ հազուագիւտ իրերով։ Այդտեղ կային հանքերի ժողովածու, կենդանիների խրտուիլակներ, կմախքներ. պատերի վերայից կախուած էին երկրաբանական և ուրիշ քարտէզներ,

զանազան աղիւսակներ, պատկերներ. պահարանների միջից երևում էին գործիքներ. դարակները թէքվում էին մեծադիր գրքերի, թղթերի և ալբոմների ծանրութիւնից։ Տան մէջ կար և գրադարան, որտեղ Ջէնները սովորաբար անցնում էր իւր առաւօտեան ժամերը։

Այդպէս սալքուել էր Ջէնները և անցնում էր իւր օրերը, երբ կեանքի արևը թերքվում էր արդէն դէպի արևմուտք։ Ընայելով նորա մեծ հասակին, առողջութիւնը լաւ էր, բայց մի քանի ժամանակից յետոյ նա ունեցաւ կաթուած. այդ հիւանդութիւնը Ջէններին պատահեց պարտէզում ման դալիս օգոստոսի 9-ին, 1820 թուին. նա յանկարծ ուշաթափ ընկաւ և նորան կիսամեռ տուն տարան, թէև այդ ցաւն անցաւ առանց հետևանքի. Ջէնները շուտով լաւացաւ և կեանքը ընթանում էր առաջուան պէս։ Բայց յունուարի 26-ին, 1823 թուին, կաթուածը կրկնուեց և այս անգամ մահաբեր էր։ Մեռնելու նախընթաց օրը Ջէնները այնպէս ուրախ էր, իրեն այնպէս լաւ էր զգում, որ ոտով գնաց հարևան գիւղը աղքատ ընտանիքներին փայտ բաժանելու համար։ Այնտեղից վերադառնալով, նա մտաւ Սաէֆենի մօտ, որ պարապում էր նկարչութեամբ իրեն սենեակում. Ջէնները սիրում էր նորան տեսնել այդ գործով պարապելիս և միշտ նորան քաջալերում էր

դէպի գեղարուեստը։ Սաէֆենը նկարում և անհոգ երգում էր մի շոտլանդական երգ. «դու բոլորովին այնպէս չես երգում, բարեկամ», ասաց Ջէնները սենեակ մտնելով. «ա՛յ ինչպէս պէտք է երգել» և երգեց երկու թէ երեք տուն։ Դուրսը շատ ցուրտ էր. Ջէնները, չխանգարելով Սաէֆենի պարապմունքին, բուխարին վառեց։ Այդ ժամանակ մէկը ներս մտաւ.— «տեսնում է՞ք, Սաէֆենը նոր ծառայ ունի». հանաք արեց Ջէնները։ Այդ օրն անցաւ ինչպէս միշտ։ Առաւօտեան Ջէնները վերկացաւ սովորական ժամանակ և գնաց իւր դրադարանը. նորանից ծառան անբաժան էր։ Այդ օրը նախաճաշը ուշացրին. Ջէններն ուղարկեց ծառային իմանալու, թէ պատճառն ի՞նչ է ուշացնելու։ Երբ ծառան վերադարձաւ, գտաւ իւր տիրոջը յատակի վերայ ուշաթափ ընկած։ Շփոթումն ընկաւ. բոլոր տնեցիք վազեցին Ջէնների մօտ, բայց նա արդէն մեռած էր։

Այդպէս մեռաւ 74 տարեկան հասակում ծաղկահատութեան հնարող զօքսոր Էդուարդ Ջէնները. նորան թաղեցին Զենտրիի պարտէզում, ուր նա դեռ կենդանութեան ժամանակ նշանակել էր։

Մեծ էր կեանքի քաջութիւնը փառաւոր հնարողի և մեծ պէտք է որ լինի մեր շնորհակալութիւնը դէպի նա։ Զանազան երկրների շատ բանասեղծներ և նկարիչներ ոգևորուեցին նորա այն մեծազործութիւններով և ժողովրդի մէջ ամրացրին յիշողութիւնը նորա մասին իրենց հեղինակութիւններով։ Ջէններին նուիրվում էին վեպական երգեր, նկարիչները նորա պատկերն էին նկարում, դերասաններն իրենց երաժշտական հեղինակութիւնների մէջ փառաբանում էին նորան։ Իտալացի քանդակագործ Մոնտեվերդէն շինեց մարմարից Ջէնների գեղեցիկ արձանը՝ բժիշկը նստած աթոռի վերայ զգուշութեամբ պատուաստում է ծաղիկը մի հիանալի երեխայի, որին նստացրել է իւր ծունկերի վերայ։ Դժուար է աւելի պարզ պատկերացնել Ջէնների կեանքի նպատակը և ծառայութիւնը։

Եթէ վերցնենք մարդկային կեանքի միջին տևողութիւնը Ջէններից առաջ, այսինքն մինչև նորա դիւտը և համեմատենք նորան ծաղկի պատուաստման ընդհանուր փոփոխութիւնից յետոյ, դուրս կը գայ, որ մեր երկարակեցութիւնը աւելացել է։ «Ջէնները մեզ երեք տարուայ կեանք է աւելացրել». ասաց Լապլասը և այդ խօսքերը կարող են ամենալաւ տապանագիր լինել Ջէնների շիրիմի վերայ։



1P

2013

11885

<< Ազգային գրադարան

NL0072573